





# Ի ՅՈՒՇ ՄԵՍՐՈՊ ՄՐԲԱԶԱՆԻՆ

Գրադարանիս վրային հոգեկոյն Ջարեհ կաթողիկոսի բարի եւ անուշ դէմքը այսօր անկողնու վրայ յայտնուեցաւ: Եկար 1963 թուականի փետրարեան համաժողովէն անմիջապէս փեռնաբան համաժողովը: Սուրբ Երեմիայի կոյնու վրայ, նուրբ Մեսրոպ արքայապետ:

Ջարեհ կաթողիկոսի հոգեկոյն, ազգանունը, եւ յատկապէս՝ ծառայական կերպարին ամենէն հաւատարիմ հետեւորդներէն մէկն էր այժմ հանգուցեալ Մեսրոպ արքայապետը: Գաղափարապաշտ եկեղեցականի բացարձակ տիպար մը, որ իր գոնուած վարչերուն մէջ՝ Անթիլիաս, Հայէպ, Նոր Ջուղա, Արեւելեան Ամերիկա եւ Հայաստան, իր վարած բոլոր պաշտօնները կատարելու ատեն, իր գործերուն, խօսքին ու գիրին մէջ դրաւ հայրենակարօտ հաւատարմորդ պատգամախօսի երանգ մը, որ վիճաբար դարձաւ Հայաստանեայց եկեղեցւոյ եւ յատկապէս Կիլիկեան Միաբանութեան ուխտեալ ծառայողներէն մէկը:

Քառասնամեակի մը վրայ երկարող իր բազմաբեղուն գործունէութեան ընթացքին, յարաշարժ, գործունէակ եւ նախաձեռնող հայ եկեղեցւոյ այս սպասարարը իր հոգեկոյն կոչումին ուղեկցող դարձուց հայ մշակույթի ճանապարհորդը, ազգային արժէքներուն պահպանումը, Հայաստանի ապատրութեան եւ ամբողջականութեան տեսիլքը եւ հայրութեան իրաւունքներուն պահանջատիրութիւնը:

Վերջին տասնամեակին Մեսրոպ արքայան իբրեւ ծառայութեան դաշտ ընտրեց վերակազմեցած Հայաստանը: Հայրենի երկրէն ան անդու տքնանքով շեփորեց հայրենական մշակութային արժէքներուն, պատկանական ողջ ժառանգութեան պահպանման անհրաժեշտութիւնը: Հաւաքական մկրտութիւններ, վանքերու վերանորոգում, կրթողներու վերաբժշկում, գիրքերու հրատարակութիւն եւ տասնեակներով հատորներու մեկենասութեան ապահովում դարձան իր հանապազօրեայ գործունէութիւնը: Անխնայ եւ յարատեւ աշխատանք՝ ի հեճուկս արտի հիւանդութեան տեսչականի:

Չինք տեսանք պատկերասփիւռային ծրագիրներու ընդմէջէն, Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիոյ տարածքներուն վրայ, Աղթամարի Ս. Խաչ եկեղեցւոյ կամ Սիսի Ս. Սոֆիայի թէ՛ Հռոմկլայի աւերակներուն մէջ պակաս օրինելու ատեն, Եփրատի ջուրերով կոկոսալու եւ վանայ լիճի ջուրերուն մէջ ոտարկիլի քայլելու ժամանակ, Կասպորակաւի եւ Տարօնի հայկական բնակավայրերուն եւ յուշարձաններուն որոնման ընթացքին, իբրեւ ուխտարար Մշտ Սուրբան Ս. Կարապետին, հայրենի աշխարհի պատմական վայրերուն մէջ՝ տարագրուած եւ խողխողած մտաւորականներու, հանրային գործիչներու, հայրենասէր հոգեւորականներու եւ նախապէս ֆետայիներու ոտնահետքերուն հետեւորդ: Հայ Գատի անժամանցելիութեան, հայոց հայրենիքի ամբողջականութեան ինչ հրաշալի պատգամ եւ հայ ազգի առհաւական ժառանգութեան ինչ շքեղ ոգեկոչում:

Ջարեհ Սքանչելին իր նախապաշարն էր: Անոր օրհնաբեր կանչին պատասխանելով եկեղեցական ասպարէզը իբրեւ հայրութեան ծառայութեան միջոց ընտրած Մեսրոպ արքայանը հաւատարիմ մնաց իր ուխտին: Հիմա, իր հողեղէն երթը կանխահասօրէն տարտած՝ կ'երթայ միանալու երախտարարներու փաղանգին՝ հաւատքի եւ յանձնառութեան յիշատակ մը ժառանգ ձգելով մեզի:

Պտղունց մը հող Նեմրոթայ սարէն ու պուտ մը ջուր վասպորակաւի Շուշանց գիւղի աղբիւրէն՝ իբրեւ բալասան յոգնատանց մարմին:

S. ճ.

# ՅԱԻԱԿՅԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Երէկ երեկոյեան Համազգայինի Կեդրոնական Վարչութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը այցելեց Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարան: Պատուիրակութիւնը Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոսին յայտնեց իր ցաւակցութիւնները Յունաստանի առաջնորդ Սահակ արք. Այվազեանի եւ Միացեալ Նահանգներու Արեւելեան թեմի նախկին առաջնորդ, մշակութային եւ հասարակական գործիչ՝ Մեսրոպ արք. Աշճեանի անակնկալ վախճանումներուն առիթով: Կեդրոնական Վարչութիւնը խնդրեց վեհափառ հայրապետէն, որ ցաւակցութիւնները փոխանցէ նաեւ միաբանութեան անդամներուն:

## ՅԱԻԱԿՅԱԿԻՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը համայն Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանրիկ անունով խորազգաց ցաւակցութիւններ կը յայտնէ Ն. Ս. Օ. Տ. Ս. Արամ Ա. կաթողիկոսին եւ Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութեան, Հ.Մ.Ը.Մ.ի փարիզներու բարեկամներ եւ սերտ գործակիցներ՝ Գերաշնորհ Տ. Սահակ արք. Այվազեանի եւ Գերաշնորհ Մեսրոպ արք. Աշճեանի վաղախա վախճանումներուն առիթով:

Հ.Մ.Ը.Մ.Ի  
ԿԵԿՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր սիրելի ժողովուրդի գաւակներուն կ'ուզենք յայտնել, թէ Ազգային Առաջնորդարանը ծրագրած է Լիբանանի Ազգային գերեզմանատուներու իրավիճակը կարգաւորել եւ բարեզարդել:

Այս ծրագիրին սկզբնական եւ կարեւոր բաժինը կը կազմէ դամբարաններու կալուածագիրներու ստուգումը եւ կարգաւորումը:



Բոլոր այն ազգայինները, որոնք Ազգ. գերեզմանատան դամբարանի կալուածագիր ունին, իրենց անուան կամ անմիջական հարազատին անուն եւ կամ հեռու բարեկամի մը անուն (բայց իրենց ըզրկալի դրուած) պարտին շրջանի եկեղեցւոյ թաղականութեան գրասենեակը ներկայանալ ամեն օր կէսօրէ առաջ ժամը 9:00էն 12:00 եւ ներկայացնել:

- 1.- Դամբարանի կալուածագիրի լուսապատճենը:
- 2.- Դամբարանի կալուածագիրի անուանատիրոջ ընտանեկան ինքնաձեւ լուսապատճենը:
- 3.- Դամբարանի կալուածագիրի անուանատիրոջ ժառանգութեան իրաւաստիւնը ունեցող անձին անունը, ժառանգական կապը հաստատող ընտանեկան ինքնաձեւ լուսապատճենը:
- 4.- Կալուածագիրի անուանատիրոջ կամ անմիջական ժառանգորդի երկրէն դուրս բացակայութեան պարագային արտասահմանի հասցեն, հեռաձայնի թիւը, Ե-մամակ եւ անուանատիրոջ հետ ժառանգական կապը հաստատող փաստաթուղթեր:
- 5.- Կարելի եղած չափով արձանագրել տուեալ դամբարանի մէջ թաղուած անձերուն անունները, ազգականական կապը եւ թաղման թուականները:

**ԾԱՆՕԹ.-** Կը խնդրուի արտասահմանի բերթերէն՝ արտասպել:

ԴԻՄԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

# Գրատուն ՈՍԿԵՂԱՐ VOSKETAR Bookstore

Տանկական ԱԲԳ եւ հեքիաթներ:

★ Հռչակատր բառարաններ Oxford, Longman, Larousse:

★ Երազներու բանալի նոր լոյս տեսած Երազահան. հոգեբանական եւ հոգեվերլուծական տրեւալներով:

Պուրճ Զամուտ, Ս. Փրկիչ եկեղեցւոյ կից, Զեռ.: 01/264750  
E-mail: vosketar@yahoo.com

ԴԱՄԱՍՍԿՈՍ

Կազմակերպութեամբ  
ՍՕԽԻ - ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ - Շ. Ս. Ը. Մ.Ի

## ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

Ելոյթ կ'ունենայ հայրենի ժողովրդական երգիչ՝  
**ՌՈՒԲԵՆ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ**

Մասնակցութեամբ՝ սիրուած երգիչ  
ՍԱՄԲՐԵ ՍԻՍՈՆԵԱՆԻ եւ «ԿՈՒՆԿ» նուագախումբին:

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 12 Դեկտեմբեր 2003ին, Դամասկոսի «Մերիտիլ» պանդոկին մէջ:

البيروت  
السفر  
السفير  
السفير  
السفير

# ԻՆՉ ԿԸ ԳԻՆԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Լիբանանեան օրաթերթերը իրենց 5 Գեկտեմբերի թիւով լուսարձակի տակ առած են Պրապիլի նախագահ Լույա Տա Սիլվայի Լիբանան այցելութիւնը եւ տեսակցութիւնը քաղաքական անձնատիրութիւններու հետ ու նախագահ Լաիտի եւ վարչապետ Հաբիբի յարաբերութիւններու բարեկամութիւնը:

«Անուար» գրած է, թէ Փաուրի հանդիպում կ'ունենայ ժընեւի նախաձեռնութեան կազմակերպիչներուն հետ, մինչ Իսրայէլի մէջ լարածութիւնը կը շարունակուի:

«Նահար» գրած է, թէ Իրաքի մէջ «մուկու կատու» ինչպէս խաղեր տեղի կ'ունենան ամերիկեան իրաւորներու եւ իրաքեան ընդդիմութեան միջեւ: Ուաշինկթօնի մերձեց ընտրութիւններէն առաջ Իրաքի մէջ մարդահամար կատարելու առաջարկը:

## ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԵՆՔ

«Տիար» օրաթերթը գրած է, թէ Տա Սիլվայ առաջին անգամ ըլլալով Լիբանան կ'այցելէ: Նախագահներուն յարաբերութիւնները լարածութիւնէն բնականօրէն կ'ընթանան:

«Տիար» գրած է, թէ Գահիրէի մէջ պաղեստինեան երկխօսութիւնը կը հասնի ամերիկեան նախագահական ընտրութիւններուն Սուլեյման կ'առաջարկէ քաղաքական նախաձեռնութիւն մը, որ ընդհանուր փնտրողարի մասին կը խօսի:

«Տիար» գրած է, թէ Ամերիկա եւ Աստրալիա պզուցագուցիկ Ռի-ստի մէջ հաւանական պայթումներէ եւ անհրաժեշտական գործողութիւններ:

«Տիար» գրած է, թէ Իսրայէլ կը սպառնայ Սուրիոյ եւ Լիբանանի վանտք կը դատարարէ կրակին վրայ ձեռք թափելու յանցանքով:

«Տիար» գրած է, թէ Լիբանանի համաձայն, Ուաշինկթօն իր քաղաքացիները կը պնդեն իրենց Լիբանան մեկնել:

«Տիար» գրած է, թէ Ուաշինկթօնի մէջ Ապտալի թագաւոր եւ նախագահ Պուշ քննարկեցին շրջանային իրադրականութիւնները, իրաքեան հարցը եւ իսրայէլի իրաւունքները:

«Տիար» գրած է, թէ Երեք տարբեր առիթներ կը փաստեն, որ նախագահներուն միջեւ հաշտութիւն գոյութիւն ունի: «Լիբանանեան ուսուցիչները» ուսանողները կը

«Տիար» գրած է, թէ Իսրայէլ իրաւունքները կը շարունակուի:

«Տիար» գրած է, թէ Ուաշինկթօնի մէջ Ապտալի թագաւոր եւ նախագահ Պուշ քննարկեցին շրջանային իրադրականութիւնները, իրաքեան հարցը եւ իսրայէլի իրաւունքները:

ԱԶԳԱՅԻՆ ԵԿԵՇԵ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՔՈՒԼԵՃԸ

Ձեզ կը հրաւիրեմ այցելելու իր կազմակերպած

## ԿԱՂԱՆԴԻ ՊԱԶԱՐԸ

«ՍԻՐԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆ» հանդիսարանին մէջ: Պիտի վաճառուին Կաղանդի յատուկ զարդեր, ծածկոցներ եւ մմներ, խմիչք, մրգեղէն, խաղալիք եւ բազմազան նուրբներ:

Բացում՝ 16 Դեկտեմբեր 2003, ժամը 11:00ին: Պազարը բաց պիտի մնայ մինչեւ Դեկտեմբեր 27, ամեն օր բացի Դեկտեմբեր 25էն ժամը 10:00էն 17:00:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ «ՆԻԿՈՒ ԱՂԲԱԼԵԱՆ» ՄԵՍՆԱԾԻՒՂ - ԱՆԹԻԼԵԱՍ

## ՅՈՒՅԱԿԱՆԴԵՍ

Արցախի վաստակաշատ գեղանկարիչ

### ՍԱՍՈՒԷԼ ԳԱՐԻԷԼԵԱՆԻ ԳՈՐԾԵՐՈՒ

Հովանաւորութեամբ՝  
ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏԻ ԲԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Բացում՝ Ուրբաթ, 12 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 8:00ին, «Աղբալեան-Շ. Ս. Ը. Մ.» Մարզամշակութային Համալիրի «Սերժ Թովմասեան» սրահին մէջ:

Յուցահանդէսը կը շարունակուի 13 եւ 14 Դեկտեմբերին, առաւօտեան ժամը 11:00էն երեկոյեան ժամը 9:00:

ԾԱՆՕԹ.- Այս ձեռնարկին ամբողջ հասոյթը կը տրամադրուի Արցախի Ֆոնտին: ՀՐԱԲԵՐ

## ԾԱԽՈՒ ՇՔԵՂ ՅԱՐԿԱՐԱԾԻՆՆԵՐ

● Անթիլիաս - Սզեթի սկիզբ: Հեռ. 04-523926:

ԻՐԱԲԵՆ ԶԱՐԳԱՅՈՒՆԵՐ

«Անուար» գիտել տուած է, թէ Ուաշինկթօն կոչ կ'ուղղէ Աստրալիան երկիրներուն Իրաքի մէջ անկողնային մասնակցութիւն ցուցաւ:

«Անուար» գիտել տուած է, թէ Ուաշինկթօն կոչ կ'ուղղէ Աստրալիան երկիրներուն Իրաքի մէջ անկողնային մասնակցութիւն ցուցաւ:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ՎԱՂՈՒԱՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

9:30 Զաղաքական լուրեր/ հայերէն  
10:00 Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մարտաձորի Ս. պատարագի ուղղակի ձայնագրում  
11:30 Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան 75ամեակի տօնակատարութեան ուղղակի ձայնագրում՝ «Յակոբ Տէր Մելքոնեան» սրահին  
12:30 Զաղաքական լուրեր/ հայերէն  
1:00 Ազգային-յեղափոխական երգեր  
2:30 Զաղաքական լուրեր/ արաբերէն  
2:45 Յունարեւմտեան ունկնդրութիւն  
4:30 Զաղաքական լուրեր/ արաբերէն  
6:30 Զաղաքական լուրեր/ հայերէն  
8:00 «All that jazz». ձեռք երաժշտութեան տարբեր ժանրերու ընտիր կտորներու ունկնդրութիւն

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»Ի ԱՅՍՕՐՈՒԱՆ ՅԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ արաբերէն  
8:45 «Աստղեր»  
9:40 «Օրուան տոմար»  
10:05 «Հոգեւոր խնդիր» Մաշտոց վրդ. Գօպանեան ուղղակի ձայնագրումով կը ներկայացնէ շաբթուան մտածումը եւ կը պատասխանէ ունկնդիրներուն հարցումներուն  
11:30 Լիբանանեան մամուլի խորագիրներու ընթերցում՝ հայերէն  
1:30 Հայաստանեան լուրեր  
3:00 «Ծաղկապտուղ» մանկապատանեկան յայտագիր՝ ուղղակի ձայնագրում  
6:50 «Օրուան տոմար» (կրկնութիւն)



# Գրական Էջ

## ԳԻՇԵՐԱՅԻՆ ԺԱՄ

### ՏԱՍՆԱՄԵԱԿԷ ՆՈՐ ՏԱՍՆԱՄԵԱԿ



«Համալգալիսին վերապահ-  
ած է մեծ դեր՝ ստեղծել աշխար-  
հիկ հայություն, որ կառուցած է ազ-  
գութեան, յենարանը դառնայ  
հայ դպրոցին ու ստանդարտին եւ  
հաւատք ունենայ Հայ Դատի  
յարթանակին»:

#### ՆԻԿՈԼ ԱՂԱՍԵԱՆ

Հայաստանի Հանրապետության տասնամեա-  
կին առիթով, 28 Մայիս 1928ին, Գահիրեի մէջ,  
հրապարակային մեծաշուք հանդիսութեան մը  
ընթացքին, Նիկոլ Աղբալեանի արտասանած  
խօսքին քաղուած վերի մէջբերումը հրապարա-  
կաւ կատարուած առաջին յայտարարութիւնն էր,  
որ կ'աւետէր ծնունդը տարագիր հայութեան  
զանգուածներէն գաղափարապաշտ, գիտակից  
եւ նուիրեալ հայութիւն մը կոհանելու նպատա-  
կով կեանքի կոչուած նոր միութեան, որ իր մայր  
կանոնագրով կոչուեցաւ Հայ Կրթական եւ Հրա-  
տարակազմական Համագրային Ընկերութիւն եւ  
այսօր, իր ծնունդէն եօթանասունհինգ տարի  
ետք, կը շարունակէ գործել իբրև Համագրային  
Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւն:  
Սփիւռքի չորս ծագերուն բաժան-բաժան մարա-  
նող հայութեան զանգուածներուն կրթական ու  
մշակութային ծով կարիքներուն գոհացումը բե-  
րելու տեսլականին չափ, ոչ մէկ յօսք, նոյնքան  
ուժեղ կը հնչէր հայութեան թեւերը իրարու կա-  
պելու, միաձուլ հայութեան արտերկրի նոր  
պայմաններուն դէմ նակատ ու ոգի լայն պար-  
զող երիտասարդ մտաւորականութիւն ստեղծե-  
լու անյետաձգելի պահանջը:

Արտասովոր պայմանները կը պահանջէին  
անսովոր լուծումներ: Արեւելքի եւ Արեւմուտ-  
քի զանազան կեդրոններու մէջ գիր ու ցան հայ  
զանգուածները հալեցի կրթութեամբ, ազգային  
գիտակցութեամբ, մշակութային ինքնուրոյն դի-  
մագիծով եւ տեսլապաշտ բովանդակութեամբ  
ոգեգիծելու առաքելութիւնը ոչ մէկ դժուարու-  
թիւն կրնար նաչելու: Չնայած ինչ որ ըրովհե-  
տեւ ներային մէջ շարունակ բոցարծարծող  
անցեալ մը կար հիմնադիրներուն ետին, հայրե-  
նի հողի կարօտը տալու ու գիշեր կը ծարձակէր  
հայ գիրի եւ դպրոցի անկետաձգելի հրամայա-  
կանէն բարձրագոյն հաւատքի եւ գործիք արշա-  
լոյսներուն մէջ, Օհանջանեաններու ու Շանթե-  
րը, Աղբալեաններն ու Իփեկեանները անցան  
գործի եւ 3 Մարտ 1930ին, Պէյրուսի մէջ, 15  
աշակերտներով կեանքի կոչեցին Հայ Ճեմա-  
րանը: Գաղափարի եւ Հայ Հոգիի դարբնոց ու  
ամրոց աւանդապահ նոր միջնաբերդ մը, որուն  
արեգակնային շրջածիրին մէջ պիտի թաւալէին  
մինչ այլ Հայկի, Դամասկոսի, Լաթաքիոյ, Ջահլէի,  
Սուէտիոյ, Դահիլիի, Աղեքսանդրիոյ եւ նոյնիսկ  
հեռուոր Ատիս Ապեպայի մէջ հիմնե-  
ւած «Համագրային» մասնահիւղերը:

Անցեալ ճեմարանը՝ Սասնեցի Գաւիթի պէս,  
օրէ օր եւ, ճեմարանին կողքին՝ հայ գիրն ու  
գրականութիւնը ժողովրդականացնելու նպա-  
տակով լոյս աշխարհ եկած տպարանը, որուն լոյս-  
ւր չմնաց անարժանագին եւ գրական լսարան, ու  
թանաքային տեղի տարածքը ու պարախումբը  
շուրջպար բոնեցիկն եւ վերածնող հայ մշակոյթ-  
իւն առիթնող համայնն ու խորհուրդը բացին  
մշակութային այլ հորիզոններու վրայ:

Այսպէս ծնան ու գործեցին եւ մահաւանդ  
այս որակի կենդանի գործի կենարար ազդերը մը  
եղաւ նոյնիսկ «Համագրային» հոմանիշ Ճե-  
մարանը, ուրկէ հայ կեանք բացուած շրջանա-  
ւարտները ոչ միայն գործեցին կրթական, ազ-  
գային, միութեանական շրջանակներու մէջ, այլ-  
եւ հայ մամուլն ու գրականութիւնը հարստա-  
ցուցին իրենց անձնապաշտ յանձնարարութիւնն  
զեղարուեստական այլազանութեամբ: Սերունդներ  
յաջորդեցին սերունդներու եւ ճեմարանը ալ  
աւելի հարստացաւ ազատութեան, լայնախոհու-  
թեան եւ մշակութային բազմակարծութեան  
աւանդներով ու վաստակով: Ապագոյց իրերա-  
յաջորդ երէք սերունդներու ուղիքներէն քաղ-  
ւած եւ րովի սիւնակներով հրամայուած երբ  
գոյնեք, որոնք բաւարար են ամբողջական նա-  
շակ մը փոխանցելու բազմերանց համապատկե-  
րին մասին, որ աշխարհ եկաւ «Համագրային»  
անուկով, դարձաւ ծաւալուն ու աշխարհատա-  
րած գործունէութիւն եւ որ նոր ժամանակներու  
մարտահրաւերներուն դէմ պիտի շարունակէ  
պայքարի ու գործելու բարձրահասակ տասնամ-  
եակէ նոր տասնամեակ:

#### Ս. ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

#### ԽՐԷ ՀՈՂԻՆ

Խրէ հողին

Եւ ուղեղիդ մութ անցքերէն  
ճիրաններդ միլիոններով թող երկարին  
քու խաւարչտին

անկիւններուդ  
անգոյ լոյսին

հպումներէն իմ մատներուս  
հողիդ վերջին  
խոսքն ու պիտի գուրդներն ընդմիջտ պիտի փխրին  
ու սխրանքով  
ու սխրագին սեռայնութեամբ

մատներուս տակ դիւայնօրէն դառնան բերրի

Խրէ հողին

Եւ միտերդ կատաղօրէն թող պարունին իր միտերուն  
մարմին մը բեռ  
մարմին մը բոռ ու մոլորութիւն

պիտի բերես

այս աշխարհին

հեռուններէն  
այս իրիկունս  
մարմին մը ոխ կատաղօրէն պիտի թափես  
կողերուն մէջ իր մարմինին

Եւ ուղեղիդ նրբանցքներուն մէջ դաւաղիր  
քոյրեր խոհի

վաւաշամոլ դարանակալ գաղտագողի  
պիտի անցնին

հին հետքերէն քու մարմինիդ

Խրէ հողին

փողերուդ մէջ շունչդ նորէն պիտի նեխի  
այս իրիկունս

ու միտերդ պիտի լուծուին իր միտերուն

ծանծաղուտին

ու թելերդ ու մատներդ ու ոտքերդ պիտի հոտին  
ու քրտնաթոր ընդերքներէն քու անօթիդ

վայիններու պառնայագին խաժամուծ մը

պիտի պոռթկայ

## ՁԻԹԵՆԻԻՆ ՎԻՃԱԿՆԵՐԸ

Միշտ ուզած եմ գրել ձիթենիին մասին,  
այնքան ընտանի, յարիտենակաճարէն կա-  
պոյտ ծառին, եւ բախեր եմ անյաղթահա-  
րելի խոչընդոտի:

Կարծես ուտերուն ու ճերմուն շուքը, իր  
հիւսուածքով մանկութիւնն ծածկող, անոր  
վսեմ, անտեսանելի խանդաղատանը ամ-  
րան յետմիջօրէններուն, ըլլային պարզա-  
պէս անգրելի...

Ծառեր կան, որոնք կ'ապրեցնեն մեր  
պարտէզները իրենց ծորուն իգականու-  
թեամբ: Ինձի համար դեղձենին, ճրձենին,  
խնձորենին, կեռասենին կ'աներ են, քաղց-  
րորէն շապուած, պահպանող բերրիու-  
թիւնը մրգաստաններուն:

Ձիթենին, իր պարզ խառնութեամբ, մկան-  
ներ ոգեկոչող ողորկ ու փայլուն թելերով,  
կը պատկանի արական միջոցին:

Արծաթագոյնէն մի՞նչ է մտքն սոխազոյ-  
նը՝ ձիթենին իր գոյները կը սփռէ, կը տար-  
բերակէ ըստ լոյսի ու ստուերի: Աշխարհ  
մըն է թափանցիկ՝ անբերաններուն, որոնք  
կը դառնան, կը ճոռուղեն, կը ճառագայ-  
թեն: Կառուցուածք ու՝ որքան այլազան՝  
այնքան միակտոր:

Տերունները կը պսպրան, թեթևօրէն թա-  
ւիշ, սակայն աւելի կարծր ու չոր՝ ճպուռ-  
ներու՝ օրը մաշեցնող խմբերգին մէջ:

Չես սոճար երբեք յամառութիւնը ձի-  
թաստաններու ձորակի մտքի այդ ծառին՝  
ձեր պարտէզի ձիթենիին - չմեղեմ, դի-  
մադրելու արուարձանէն ներս խոժող քա-  
ղաքի քարայնութեան...

Ո՛չ նորարոյս, ո՛չ ծեր՝ ան կայ միշտ  
մանկութեանդ աշխարհագրութեան մէջ:

Անոր շուքին հայրը կրնայ ամառնային  
ախոռ սարքած ըլլալ, եւ ճիւղերը կրնան  
ամփոփել խիտ հոտը թրիքին ձեր միտին, որ  
կը վրձէ երբեմն, երբեմն ալ լուռ՝ ժամա-  
նակը կ'աղայ:

Ձեր ձիթենիին միակ անվնաս մնացած  
մասը երկար, շեղ ճիւղ մըն էր, անասունի  
քամակի մնացող, եւ որ կ'աւարտէր սան-  
ձարձակ վրձինով մը նորարոյս ուտերուն:

Արտասովոր եւ ուրախ խրիկն է մը կանայ:  
Կը հեծնէր անոր փորին՝ իբրև միտ մը  
վրայ: Ձիւղ էր, որ հոժոտ օրերուն կ'արձակ-  
ւէր միջոցին մէջ, կը մարտնչէր ամպերուն,  
հրէշներուն դէմ:

Կ'ուզէր անոր հետ չափել դիմացի դաշ-  
տերը, նարնջաստաններուն մօտ վարակի  
մնան աճող ճահճալի գիւղաքաղաքը. լեռ-  
ները՝ իրենց մանիշակագոյն խորհուրդով:

Ծաղկազարդին, ձիթենիները կը փետ-  
տուէին՝ մարդու հասակին մատչելի իրենց  
ճիւղերէն:

բուռերուդ մէջ արիւնջուայ  
պարմանայի մերկ ու շփոթ  
երեխայ մը  
պիտի բերես այս աշխարհին  
հեռուններէն այս իրիկունս

Խրէ հողին

#### ԴՈՒՆ ԿԻՆՆ ԵՍ ՈՐՈՒՆ ԵՍ ԿԸ ՀԱՆԳԻՊԻՄ

դուն կինն ես որուն ես կը հանդիպիմ  
կանխամտածուած այն ճակատագրով  
որ գանկը գանկին կը հրէ գաղտնի  
որ շրթունքները արեան խաւարէն

կը բերէ իրար եւ ռիւքմօրէն  
կը մատնէ կռուին սովախար մարմնի

դուն կինն ես որուն արեան ծխորին ես կը հետեւիմ  
դաւադիր հյուս

չոր ես կը գտնեմ հետքերէն ռիւի  
որմէ կը հրճուիմ դիւային ռիւով  
չոր դէռ կը գգուեմ շրթներով մոլի  
չոր դէռ կը սիրեմ անանուն դողով

Եւ կինն ես որուն ես կը կարօտնամ ամէն իրիկունս  
չոր ես կը լլկեմ ճիւղերով վայրի  
որմէ կը խմեմ բուռերով արիւն

Եւ վայրենութեամբ  
մարմինն իր այրի  
մերկ կը յօշոտեմ

դուն կինն ես որուն ես դէռ կը պարտիմ  
չոր դէռ կը ցանկամ քինախնդրութեամբ  
որուն կը կառչիմ յուսահատօրէն  
չոր միշտ կ'անարգեմ  
չոր միշտ կը լքեմ  
որուն նպովքէն յաւիտեան տխուր  
մարմինն այս հիւանդ  
մարմինն այս թափուր  
ամէն առաւօտ  
որպէս շանսխուր  
կը նետեմ շեմքիդ

#### ԿԱՐՈ ԱՐՄԵՆԵԱՆ

Պահպանները նոյնիսկ հրացաններով  
անկարող էին դիմադրելու տարեկան այս  
կազմակերպուած, օրհնուած վայրագու-  
թեան: Տեղացիները եկեղեցի պիտի երթա-  
յին մեծ սուներով, որոնք պիտի պնդուէին ձի-  
թենիի ուտերով, ծաղիկներով, ծապաւնով:  
Պատարագի աւարտին, ուտեր կը բաժնէին  
հաւատացեալներուն, տալով իր թէ հոգի-  
ներուն ու աշխարհի խաղաղութիւն, աւետե-  
լով մտքը սրբազան շաքաթին:

Եւ այն ձիթենիի ճիւղը կայ տակաւին, չոր-  
ցած, կարծրացած, փոշոտ, բայց բժախնդրօ-  
րէն պահպանուած՝ Բեթլեհէմէն եկող հազ-  
արդիտ լուսանկարի շրջանակին վրայ:

Հոն կը բարձրանայ դէմքը քու չնանցած  
մեծ սօղո, սեւ ամրադրուագ մազերով, նայ-  
ւածքը բնուած՝ հեռաւոր տաճարին մէջ  
օրհնուելու պահուն: Հաճին:

Երկու աղջնակները ան կրեց երկու միմ-  
նէն ծովայի որբանոցները, յետոյ միայն ժա-  
մանակ գտաւ մեղմելու:  
Քու ծագունդ:

Իր դանդաղ աճուող ձիթենին կ'ընէ գրե-  
թէ անշարժ, անփոփոխելի:  
Ծառերուն է՛ն յուշարձանայինը:

#### ԳՐԻԳՈՐ ՊԸԼՏԵԱՆ

## ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾՈՒԹԻՒՆ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Գրականութիւնը երբեմն կ'ընթացի իր բառերու հետ խաղ մը, որ  
ենթակային համար կը ստեղծէ բաւական մեծ քանակութեամբ հաճոյք. ուր  
մարդկային ենթագիտակցող անկաշակն ու ձեռք ինքզինք կ'արտայայտէ:  
Ձրիթէն ու ազատ որեւէ քննութենէ: Հարկ է հոս վերադառնալ խաղին թե-  
յազրած սեռային տարածքին, սեռային՝ ֆրէժուտեան իմաստով, լիպիտիլա:  
Յիշուի կ'ըսէր. «Ամէն երեխայ, որ կը խաղայ, բանաստեղծի կը նմանի: Բա-  
նաստեղծ բարձր հասկնալու է իր ստուգարանական իմաստով: Բանաստեղծ,  
կամ ստեղծող, հեղինակ: Երեխան լուրջի կ'ուսնէ իր ստեղծած խաղը, ինչ-  
պէս գործը ինք: Խաղը կը հակադրուի իրականութեանը: Ահա թէ ինչու խա-  
ղայն ու գրելը (ստեղծելը) հաճոյսնայ մըն են, յարատեւ շարունակութիւնն ու  
կրկնութիւնը մանկական հին ու կորսուած խաղերուն, մօր արգանդին մէջ սե-  
ռային խաղերուն, գոհացնելով կարծես ենթագիտակցանք: Մանկութեան ընթացքին  
հաճոյքի յիպոթիզալ սկզբունքներն: Մշակութային պիտակաւորումն ունեցող մարդ-  
կային գանազան գործունէութիւնները (երեւակայական, զեղազտական, կրօ-  
նական) առակ են կրկին կեանքի կոչելու խաղի անսահման կարծիութիւնն ու  
վերագտնուած վայելքի հին եւ անհուն տարածքը:

Սակայն ինչպէս հասկնալ ընթացիկը: Այսինքն՝ ինչն է, որ կը կար-  
դանք ընթացիկ մէջ: Ի՞նչն է, որ հեղինակը կը կարգայ, երբ կը գրէ: Մարդ  
միտ ինքզինքն է, որ կը կարգայ: Թիւքսի ստեղծարանութեան թէ մեկնաբա-  
նական վերլուծման պարագային, պէտք է անպայման նկատի ունենայ եր-  
կու կարեւորագոյնը՝ հոգեկրկնացումը (sublimation) եւ նոյնացումը (iden-  
tification):

Հոգեկրկնացումը հոգեբանական այն մեքենականութիւնն է, որ ընդգա-  
յին մղում մը կը դարձնէ դէպի նոր, ոչ-լիպիտիլայն նպատակ մը, դէպի բնկե-  
րութեան կողմէ կրկնապէս արժեւորուած առարկայ մը: Գարով նոյնացման,  
անիկա ներկայ է ամէնուրեք: Հեղինակը կը ցանկայ նմանիլ ծօտիփեան եռան-

կիւնի մէկ անդամին: Ըստ հոգեվերլուծական գիտութեան, գրական երկը կը  
համապատասխանէ այն իտէլայ գաւկին, զոր հայրը միայն կրնայ տալ: Եր-  
բեմն, հեղինակը կ'ըլլայ իր երկին հայրը, մայրը, զաւակը միասին (Ա. Արթու-  
րեան): Իտէլայ գաւկին է, զոր միշտ կը ցանկանք ծնիլ:

Ամենատարակալ մակարդակի մը վրայ, ընթացող ինք կը նոյնանայ  
հեղինակի ստեղծած հերոսներուն հետ: Կ'ուզէ նմանիլ անոնց: Պարզապէս  
ինքզինքն է, որ կ'իտէլայականացնէ: Հեղինակի ստեղծած կամ ընթացողի երե-  
ւակայած գանազան սեւարիտները իր յայտ կը բերեն մեր հին կիրքերն ու ման-  
կական ցանկութիւնները: Կը վերագտնենք հին հաճոյքը ու կը խաչանաք  
անով: Սեռային նպատակը կը գանցուի, այլ կը փոխարինուի «բարձր» հոգե-  
կան նպատակով մը: Բարդոյնը կը գետեզուի ընդունելի ու մշակութապէս  
արժեւորուած պարունակէ մը ներս:

Բայց ինչու՞ կը գրենք: Պատասխանները կրնան տարբերիլ:  
Արուեստագէտը, գրողը, այն անձն է, որուն զգայուն եւ դիւրահաղորդ  
ընդթիւնը կ'արգիլէ ներքին հոգեբանական բախումներու արագ լուծումը:  
Ստեղծագործող կ'ապրի յաւելեալ տագնապ մը, որ գինը կը մղէ սակայն երկ-  
րորդ աստիճանի բեմադրութեան մը ներքին անյետաձգելի անհրաժեշտու-  
թեան: Այսպէս է, որ կը ծնի (սկզբունքայնօրէն՝ գէթ) արուեստի երկը, գրա-  
կան գործը: Բնական է, որ ստեղծագործ ճեմքը կ'ուղղուի այլ «ես»ի մը, գր-  
կան զորք: Բնական է, որ ստեղծագործ ճեմքը կ'ուղղուի այլ «ես»ի մը, գր-  
կան զորքին է կոչել երկին «բնուումի» (destinataire): Պատէր կը խօսի «կեղծա-  
ւոր ընթացողին», իր «եղբոր», իր «նմանին» մասին: Թուսո անդադար կ'ակ-  
ուարելէ գալիք սերունդներուն, որ հաւանաբար հասկանան գինը: Բայց հարկ է  
ճշդել, որ ստեղծարանութեան մը սկզբունքային մակարդակին (նարկաբան-  
կանութիւն), իսկական «բնուումի» վնասուելու է այլուր, այսինքն՝ երեխայ-  
հեղինակի «բնուումի» վնասուելու ծիւղին ներս:

#### ՇՈՒՇԻԿ ՏԱՍՆԱՊԵՏԵԱՆ

# ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ԱՐՏԵՍԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

ՀԱՄԱՑԱՆՑ

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀ




ԼՈՆԿՆՈՐՆ ՊԻՏԻ ԵՐԱՊԱՐԱԿՈՒԻ 2005ԻՆ

«ԻՆՍՏԵՐՆԱԿ ՄԵՍԵՆԸՆԿ»


## ՀԱՄԱՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ ՉՐՈՅՑԸ ԿԸ ԾԱՂԿԻ

## ԱՐԱԳ ԱԿՆԱՐԿ ՄԸ «ՄԱՅՔՐՈՍՈՑԹ»Ի ՅԱԶՈՐԴ «ՕՓԸՐԷՅԹԻՆԿ ՍԻՍԹԵՄ»ԻՆ ՎՐԱՅ



Ուզե՞նք կամ չուզե՞նք, սիրենք կամ ոչ, «Ուինտոգ» Օփերեյթինգ Սիսթեմը ամենագոյ է: Երկար գոնեղին վրայ գտնուող համակարգիչներուն աւելի քան 90 առ հարիւրը կը գործէ այս դրուժեամբ: «Ուինտոգ էքս-Փի»-ի հրապարակումէն երկու տարի ետք, արդէն կարելի է ընդհանուր արժեւորում մը կատարելով ըսել, թէ դրուժիչը իր նախորդ տարբերակներէն աւելի կայուն եւ ապահով է, անոր ընձեռած կարելիութիւններուն ծիրը՝ աւելի ընդարձակ: Սակայն այդ չի նշանակեր, թէ «էքս-Փի» կատարելագործուած եւ անթերի է: Ան կը ստեղծէ հարցեր, եւ հաստատ իրողութիւն է, որ ամբողջովին վստահելի դրուժիչն մը ստեղծելու նպատակով «էքս-Փի»-ն պատրաստած «Մայքրոսոֆթ» ընկերութիւնը հարիւր աւ հարիւր զոհաբերելի արդիւնքի չէ հասած:

Այժմ տեղեկատուական արհեստագիտութիւնը, եւ յատկապէս՝ Պիլ Կէյթի «Մայքրոսոֆթ»ը, կատարեալ «օփերեյթինգ սիսթեմ» մը ունենալու իրենց յոյսերը կա-



պած են «Ուինտոգ»ի 2005ին հրապարակուելիք Լոնկ-Նորն տարբերակին հետ: Եւ տրուած ըլլալով, որ ճարտարաբանութեան արհեստագիտութեան ընդհանրական նախագիծ մը: Սակայն համակարգիչի սիրահարներ արդէն շատ աւելի բան գիտեն Լոնկ-Նորնի մասին, տրուած ըլլալով, որ ծրագրիչին նախնական մէկ տարբերակը «սպրոզ» է հրապարակ եւ Մայքրոսոֆթի մէջ կը վաճառուի ընդամենը... 2 տարի: Փորձառական այս տարբերակը նշեալ երկրէն «արտածուած է» նաեւ Լիբանան:

Բնականաբար մինչեւ 2005 թուական շատ բան կրնայ փոխուիլ Լոնկ-Նորնի մէջ: Սակայն ստորեւ կը ներկայացընենք մեր ունեցած պատկերացումը անոր գործելաձեւին մասին:


Համակարգիչի գնողներ Լոնկ-Նորնը պիտի գտնեն այնտեղ արձանագրուած: Իսկ այն համակարգիչ օգտագործողները, որոնք կ'օգտագործեն «Ուինտոգ»ի նախկին դրուժիչները (98, 2000, «էքս-Փի»), Սի-Տի-ի մը միջոցով պիտի կարենան փոխել իրենց դրուժիչները, եւ այդ ընդամենը 15 վայրկեանի մէջ (նախապէս նման գործողութիւն աւտուագն ժամ մը կը խլէր):

Տրուած ըլլալով, որ անվտանգութեան հարցին վրայ մեծ շեշտ կը դրուի այս օրերուն, կ'ակնկալուի, որ Լոնկ-Նորն աւելի «խիստ» գտնուի այս առումով եւ «Ֆայլ-ըրուժներու դրուժիչներ աւելի լաւ կերպով գարգացած եւ համարկուած ըլլալ: Թէ է կը խօսուի, որ «Մայքրոսոֆթ» պիտի արձանագրէ նաեւ հակաժահրայիչ ծրագրի մը, սակայն հաւանաբար այդ մէկը չկատարուի, եւ փոխարէնը՝ ընկերութիւնը գործակցի հակաժահրայիչ ծրագրիչներ պատրաստելու մէջ մասնագիտացած այլ ընկերութեան մը հետ:


Լոնկ-Նորն մեծ խոստումներ կու տայ նաեւ յատկապէս կարելիութիւններու գարգացման իմաստով: Նոր եռազրկ ինթըրֆէյսը, որ կը կրէ «այրօ» անունը, կատուցուած է այնպէս մը, որ լրակազմն օգտագործող «թրիտի» արհեստագիտութիւնը: Կրաֆիքսի դրուժիչներ այլ գարգացումներ եւս պիտի ապրի: Պատկերները պիտի ըլլան աւելի յստակ, իսկ գոյները՝ աւելի իրապաշտ: Բնականաբար նորութիւններու շարքը այս քանով չ'աւարտիր: «Մայքրոսոֆթ»ի անձնակազմը պիտի յաջողի՝ իրականացնել կատարելագործուած դրուժիչն մը մէջ տեղ ընկնելու իր տեսլականը: Ստոյգ պատասխան մը կրնանք առնել միայն 2005 թուականին:

Իր կեանքին առաջին տարիներուն «Ինսթընթ Մեսենջինկ»ի («Այ. էմ.») դրուժիչը պարզունակ արհեստագիտութեան վրայ հիմնուած շատ սահմանափակ դրուժիչն մըն էր: Այդ բոլոր փոխուած է այսօր: Համացանցային շատ աւելի կարելիութիւններ կ'ընձեռէ, քան՝ երբեմնի սահմանափակ աշխատելու, որ գրուժեամբ գրողներու դիւրութեանն անդէն չէր երթալ: Այսօրուան ծրագրիչներով կարելի է Ֆայլեր փոխանակել, «էս. էմ. էս.»-ներ ուղարկել ընկերային հեռաձայններու եւ փէյճըրներու եւ նոյնիսկ խաղերով ժամանակ անցընել եւ թուագրային քարտեր ուղարկել:

Այս պատճառով այսօր «Ինսթընթ մեսենջինկ»ը մեծ ժողովրդականութիւն կը վայելէ: Ուսումնասիրութիւններու «Այ. Տի. Սի.»-ն ներկայացընենք «Այ. էմ.» շարք մը ընկերութեան տուեալներուն համաձայն, 1998ին աւելի քան 63 միլիոն անհատ այս դրուժիչներուն ըստանորդագրուած էր: Անցեալ տարուան տուեալներով, այս թիւը գրեթէ եռապատկուած է եւ հասած՝ 174 միլիոնի:



Հեռաձայնային հաղորդակցութեան նման, «Ինսթընթ մեսենջինկ» ուղղակի կապ կը ստեղծէ երկու կամ աւելի կողմերու միջեւ: Սակայն այս դրուժիչը նուազ անձնական է, տրուած ըլլալով, որ կարելի է դիւրաւ կապ հաստատել բոլորովին օտար անձերու հետ եւ կապը նոյնքան դիւրութեամբ խզել:



Ի տարբերութիւն հաղորդակցութեան այլ միջոցներու այս դրուժիչներով կարելի է գիտնալ, թէ ենթակայն տուեալ պահուն կրնա՞յ գրուցել, թէ ոչ: Բնականաբար «Այ. էմ.»-ի դրուժիչը տուններուն մէջ թափանցելի է ետք սողոսկած է նաեւ աշխատատեղիներէ եւ գրասենեակներուն մէջ:

Թէ է գործատէրեր չեն գիտակցիր այդ մէկուն, սակայն «Այ. էմ.»ը կը նպաստէ գործատեղիին մէջ պաշտօնեաներու միջեւ հաղորդակցութեան ընթացքը:

www.aim.com հասցէով կայքէջ:

### \* «ԱՅ. ՍԻ. ՔԻԼ ՓՐՕ 2003»

«Այ. Սի. Քիլ.» պատմութեան առաջին «Այ. էմ.» ծրագրիչն է: Պատրաստուած 1996ին եւ «էյ.Օ. էլ.»-ի վաճառուած 1998ին, ծրագրիչը այսօր ունի երկու նորագոյն տարբերակներ առաջինը՝ «Այ. Սի. Քիլ լայթ», որ «սկսնակներու» համար է, եւ «Այ. Սի. Քիլ Փրո»՝ աւելի բարդ կարելիութիւններ ընձեռող: «Այ. Սի. Քիլ» նոյնպէս մեծ ժողովրդականութիւն կը վայելէ: 2002ին անոր բաժանորդներուն թիւը կը հասնէր 18 միլիոնի:

Ծրագրիչը կարելի է արձանագրել [www.icq.com](http://www.icq.com) հասցէով կայքէջ:

### \* «ԷՄ. ԷՍ. ԷՆ. ՄԵՍԵՆԸՆԸՐ 6»

«էմ. էս. էն. մեսենջըր» ամէնէն սիրուած «Այ. էմ.»-ի ծրագրիչներէն մէկն է եւ աւելի դիւրաւ օգտագործելի, քան՝ իր մրցակիցները: Անոր միակ ծիտական կողմը այն է, որ յարաբերաբար նոր ծրագրի մը ըլլալուն, հետեւողներու աւելի փոքր փառանք մը ունի (սակայն այստեղ արժէ նշել, թէ Լիբանանի մէջ տագոծուած է, քան «Այ. էմ.»-ի որեւէ այլ ծրագրիչ): «էմ. էս. էն.»-ի գրոյցի ծրագրիչը համարկուած է

«Հոթմէյլ» ե-նամակի դրուժեան հետ: Ծրագրիչն ինթըրնոյ կարելի է Ֆայլեր փոխանակել կամ ուղարկել ուղղակի խօսակցել: «էմ. էս. էն. Մեսենջըր»ը կարելի է արձանագրել [www.msn.com](http://www.msn.com) հասցէով կայքէջ:

### \* «ԷՅ. Օ. ԷԼ. ԻՆՍՏԵՐՆԱԿ ՄԵՍԵՆԸՆԸՐ 5,2»

Ծրագրիչը ունի 200 միլիոն բաժանորդներ եւ կը նկատուի ամէնէն աւելի ժողովրդականութիւն ունեցողը: Անոր նորահայտ արձանագրիչը՝ 5.2, կարելի է գրուցել նաեւ «Ափըլ»ի «Այ-չէթ» եւ «Այ. Սի. Քիլ. Լայթ» ծրագրիչներ օգտագործողներուն հետ: Սակայն իր ընձեռած կարելիութիւններով «էյ.Օ. էլ.»-ն կը մնայ իր անմիջական մրցակիցներէն՝ «էմ. էս. էն. Մեսենջըր»-էն եւ «Եստու Ման-ճըր»-էն:

### \* «ԵԱՆՈՒ ՄԵՍԵՆԸՆԸՐ 5,6»

«Եստու Մեսենջըր 5,6» եւ «էմ. էս. էն Մեսենջըր 6» նմանօրինակ կարելիութիւններ կ'ընձեռեն: «էյ.Օ. էլ.»-էն եւ «էմ. էս. էն.»-էն ետք «Եստու» երրորդ ամէնէն աւելի ժողովրդականութիւն վայելող ծրագրիչն է:

Զայն կարելի է արձանագրել <http://messenger.yahoo.com> հասցէով կայքէջ:

## ԱՐՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ



### «ԿԷՅԹՈՒԷՅ ՄԻՏԻԱ ՄԵՆԹԸՐ»

«Կէյթուէյ» ընկերութիւնը պիտի ըլլայ առաջինը, որ հրապարակ կ'իջեցնէ «Մայքրոսոֆթ Ուինտոգ էքս-Փի-Սի»-ի վերջին օփերեյթինգ սիսթեմով բանող համակարգիչ մը: «էքս. էմ.» եւ «Թի. Վի. Թիւնըր»-ով, Տի. Վի. Տի. փէյճըրով եւ պրոնըրով օժտուած այս սարքը կը գործէ ինթըրնէթ ֆեյթիւրմ ֆորմատով եւ իտալական սարք մըն է պատկերասփիւռ-նատիւ-համակարգիչ մը ունենայ փափաքողներուն:

Սարքը կ'արժէ 1500 տոլար: Անոր մասին մանրամասնութիւններ կարելի է գտնել [www.gateway.com](http://www.gateway.com) հասցէով կայքէջի մէջ:

### «ԷՅՉ. ՓԻ. ԱՅՓԷՔ» ԳՐՊԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻՉԸ

«Մայքրոսոֆթ»-ի օփերեյթինգ սիսթեմներով գործող «էյ. Փի. Այ. փէք» գրպանի համակարգիչը վերջին օրերու մրցակիցը կը հանդիսանայ «Փալմ» օփերեյթինգ սիսթեմով գործող մանր համակարգիչներուն: Ընկերութիւնը վերջերս հրապարակեց «Այ-փէք» շարքի



երկու նոր տարբերակներ՝ «էյ.Չ. 4150» եւ «էյ.Չ. 4350»: Այս վերջինը օժտուած է նաեւ փոքր քիպորտով, ինչ որ անանձնայատկութիւն մըն է:

Սարքերը կ'արժեն շուրջ 500 տոլար: Անոնց մասին տեղեկութիւններ տեղադրուած են [www.hp.com](http://www.hp.com) հասցէով կայքէջի մէջ:

**ՇԻՐԱԿ**  
ՏՊԱՐԱՆ • ՀՐԱՏԱՐԱԿԶԱՏՈՒՆ

Առևտրական Տպագրութիւն  
Այցետմներ - Լամակի Թուղթեր - Պահարաններ  
Թուղթիկներ - Հաշուեցոյցներ - Ստացագիրներ  
Որմազկներ - Պիտակներ - Կնիքներ - Ելի.

Միութենական եւ Դպրոցական  
Տպագրական Աշխատանքներ  
Յայտագիրներ - Հրահրատմներ - Օրացոյցներ  
Վիճակցոյցներ - Վկայականներ - Տարեգիրքեր  
Պարբերաթերթեր - Ելի.

Հարասնական Զարտերու Ծոխ Հաւաքածոյ  
Հարպոյեան Կեդրոն • Bloc C • Պո.րճ Համուտ • Հեռ. 01 253008  
Բնակնոր Աշխատանք • Սրագ Ապասարկութիւն • Սերտուած Գիներ

**ԾԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ**  
«Ազգակ» մէջ ազգային կամ առևտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խնդրուի ծանուցումին բնագիրը ընթերցելի գիրով (հաստատութեանց պարագայի՜ն՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած ներկայացնել «Ազգակ» ծանուցումներու գրասենեակը:

**«ԱԶԳԱԿ»Ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻՒՆԵՐԸ**  
«ԱԶԳԱԿ»ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն - 258526, 260115 եւ 241274:

# Մանկապատանեկան

## ԼԱԻ ՉԵԿՈՅՑ ՄԵ ՊԱՏՐԱՍԷ

Ուսուցչուհին քեզնի պահանջեց գեկոյց մը պատրաստել Անթաքթիքի կետերուն մասին, բայց դուն չես գիտեր, թե ինչպես պետք է աշխատիլ: Ահա՛ վեց կարեւոր կետեր, որոնց շնորհիւ դուն կրնաս գեկոյցներուն թագաւորը կամ թագուհին դառնալ: Մի՛ մոռնար, որ յաջող գեկոյց մը մնալ եւ առաջ լաւ պատրաստուած աշխատանք մըն է:



- Առաջին օրէնք: Առաւելագոյնը երեք մասերէ բաժնուած յատակագիծ մը պատրաստէ: Անոնցմէ իւրաքանչիւրը կրնայ իր կարգին բաժնուած ըլլալ 2 կամ 3 պզտիկ բաժիններու:

- Երկրորդ օրէնք: Տեղեկութիւններու «որսորդութեան» գնա: Անշուշտ նախեւ առաջ կրնաս փնտռել գրադարանին մէջ, սակայն մի՛ մոռնար, որ համացանցը լայն տեղեկութիւններ կրնայ հայթայթել նաեւ (փնտռողներէ հասցէի մը մէջ տպուկով կեկոյցի նիւթը): Կան նաեւ համայնագիտարանները եւ յատուկ թերթեր: Այս տարրեր տեղեկութիւններուն յուսապատճէնը պատրաստէ եւ գանոնք շարէ ըստ քու յատակագիծիդ:

- Երրորդ օրէնք: Գրառումներ կատարէ: Հաւաքած տեղեկութիւնները լաւ կարգաւ եւ գիծ քաշէ կարեւոր հատուածներուն տակէն՝ առանց մոռնալու նշումներ կատարելու, որովհետեւ կարողաւ ընթացքին գրառումները քեզի կ'օգնեն աւելի լաւ հասկնալու:

- Չորրորդ օրէնք: Գեղեցիկ ներկայացում մը անհրաժեշտ է: Գործածէ

գունաւոր մեծ խաւաքարտեր, որոնց վրայ պիտի փակցնես նկարներդ եւ գծագրութիւններդ: Մի՛ մոռնար նկարներուն տակ բացատրութիւններ գրելու:

լայ՝ ունկնդիրներուդ ուշադրութիւնը պահելու համար:

- Վեցերորդ օրէնք: Զեկոյցին օրը յատակագիծը արձանագրէ՝ զրատախտակին վրայ, խորունկ շունչ մը առ եւ սկսէ... Արդէն առաջին երկու նախադասութիւններդ ըսելէ ետք (եթէ դուն անկապ եւ անհասկնալի խօսելու տպաւորութիւնը պիտի ունենաս), շատ աւելի հանգիստ պիտի զգաս եւ բոլորին ուշադրութիւնը գրաւես:

Յաջողութիւն:



## ԻՆՉՈՒՄԵՐ ԱԶՔԵՐՈՒՆ ՏԱԿ ԲԻԾԵՐ ԿՐՆԱՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆԱԼ

Երբ մենք յոյնած ըլլանք, մեր աչքերուն մկանները բնականն աւելի կը կծկուին: Ասիկա արգելք կ'ըլլայ արեան, որ ան պէտք եղածին պէս չըջի: Այս ձեւով, թթուածինով աղքատ այս արիւնը աւելի մութ գոյն մը կը ստանայ... Եւ որովհետեւ մեր աչքերուն տակի մորթը շատ բարակ է (ան մեր մարմնին ամէնէն բարակ մորթն է), ան գրեթէ թափանցիկ է. այս ձեւով մենք կը տեսնենք հաւաքուող արիւնը, որ կ'ուռեցնէ պզտիկ երակները: Աչքերուն տակ նման բիծեր չունենալու միակ միջոցը կանուխ քնանայն է:



## ԻՆՉՊԵՍ ՈՒՂԵՂԸ ԱՄԲՈՂՁ ՄԱՐՄՆԻՆ ԿԸ ՀՐԱՀԱՆԳԷ

Ուղեղը մարմնի կապուած է շրջերով. անոնք շատ բարակ թելեր են, որոնք տեղեկութիւններ կը փոխանցեն: Այս տեղեկութիւնները կրնան ըլլալ հրահանգներ, որոնք ուղեղէն դէպի մարմնին միւս բաժինները կ'երթան, կամ տեղեկութիւններ զգացումներու մասին, ինչպէս՝ տաքութիւնը կամ ցաւը, որոնք մարմնէն դէպի ուղեղ կ'երթան:



Երբ կ'ուզես առարկայ մը բռնել, ուղեղը շրջերով միջոցով հրահանգ մը կը ղրկէ՝ ձեռքիդ եւ թեւիդ մկաններուն, որոնք կը սկսին շարժիլ: Տեղեկութիւնը մկաններուդ կը հասնի շատ կարճ երկվայրկեանի մը մէջ, այնքան արագ, որ ձեռքդ անմիջապէս կը շարժի:

## ԱՅԼԱԶԱՆ

● Օղասուն եկեղեցի մը: Անգլիացի մը հնարած է... ուռող եկեղեցի մը: Անոր պատուհանները կերպրակալ են եւ կարելի է զայն փոխադրել բռնատարով:



Ըստ հնարողին, այս իւրայատուկ եկեղեցին հետաքրքրական է, որովհետեւ այս ձեւով կարելի է եկեղեցական ծէսեր կազմակերպել որեւէ տեղ:


● Իւրայատուկ դասարան մը: Անգլիացի ուսուցչուհի ձէն Փաքիի դպրոցը իսկապէս յատուկ է: Այս դպրոցը գետեղուած է Սկոթլանդի արիւնքի մօտ, պզտիկ կղզիի մը վրայ եւ ունի միայն մէկ աշակերտուհի:



● Հանգստեան կոչուած աստղը: Մանօթ եւ Չիթային: Ան 60 տարիներ առաջ պատրաստուած թարգանի ժպտաւէններուն մէջ հերոսին շեմփանգէն էր: Երկար տարիներ ետք Չիթա տակաւին կ'ապրի: Ան 71 տարեկան է եւ ան աշխարհի ամէնէն ծեր շեմփանգէն է:



## ԽՈՒՍԱԳԻՐ ԵՓԱԾ ՊՏՈՒՂՆԵՐՈՎ ՉՈՐ ԿԱՐԿԱՆԴԱԿ (ՔԷՅՔ)




Անցան անձրեւտ օրերուն հաճելի է կէսօրէ ետք տաք թէյ մը խմել եւ հետը համտեսել այս կտոր մը կարկանդակը...

Պէտք ունիս (4 հոգիի համար) 250 կրամ ալուր, 120 կրամ շաքար, 120 կրամ կակուղ կարագ, 250 կրամ եփած պտուղ (ֆրուի բոնֆի), 3 հաւկիթ, 2 թէյի դգալ պէյթինկ փաուտըր:

- 1) Փուրը վառէ 200 աստիճանի վրայ (թերմոսթ 6): Քէյթի յատուկ ափսէի մը վրայ կարագ քսէ:
- 2) խորունկ ամանի մը մէջ խառնէ կարագը եւ շաքարը՝ թանձր խմոր մը ստանալու համար: Հաւկիթները աւելցուր մէկ-մէկ: Լաւ խառնէ:
- 3) Եփած պտուղները լեցուր ալիւրին մէջ: Ալիւրը, պտուղները եւ պէյթինկ փաուտըրը աւելցուր խմորին վրայ: Խառնէ:
- 4) Խմորը փուռի յատուկ ափսէին մէջ դիր: Կարկանդակը եփէ մօտաւորապէս 45 վայրկեան:

## Ժ Ա Մ Ա Ն Ց



Կրնաս իւրաքանչիւր վիուկի վերադարձնել իր կատունը:



Կրնաս գտնել երկու պատկերներուն միջև գոյութիւն ունեցող եօթը տարբերութիւնները:


գլխարկ	մոմ	կարգանդակ	փուշիկ	նուր
<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>



Կրնաս գտնել, թէ քանի հատ կայ իւրաքանչիւր առարկայէն:

Պատրաստեց՝ ՇՈՂԻԿ ՏԵՐ ՂՈՒԿԱՍԵԱՆ

www.aztagdaily.com



# ԱՆՍԽԱԼ ԳՐԵՆՔ

## 2003

Եթէ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտ ես. մասնակցէ՛ «Պպտիկ - Մպտիկ»-ի հայերէն ուղղագրութեան մրցումին:

- Մրցումին կրնան մասնակցիլ 4րդ, 5րդ եւ 6րդ դասարանի աշակերտներ:

- Մրցումը տեղի կ'ունենայ կիրակի, 7 դեկտեմբերին, Մեսրոպեան վարժարանի սրահին մէջ, կէսօրէ ետք ժամը 3:00էն 4:00 4րդ դասարան, 4:00էն 5:00 5րդ դասարան, 5:00էն 6:00 6րդ դասարան:

- Իւրաքանչիւր մակարդակի շահողը պիտի ստանայ արժէքաւոր նուէր մը. իսկ բոլոր մասնակցողները պիտի ստանան յիշատակի նուէրներ:

**ՈՒՇԱԿԻՈՒԹՅՈՒՆ**

- Իւրաքանչիւր դասարանի աշակերտ պարտի Մեսրոպեան վարժարան հասած ըլլալ ի՞ր դասարանի մրցումէն կէս ժամ առաջ:

- Աշակերտները իրենց հետ պէտք է ունենան զրեանական պիտոյքներ:

ԲԱՍԱԶԳԱՅԻՆ ԳՐԱՄԱՆՈՒԹ. «Ճաղպոյեան» կեդրոն. հեռ.՝ 01-241263/4

ՀԱԼԵՊ ՀԱԼԵՊ

ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ

ՀԱՌԻՐՏ ԳԱՐԱԿԵՕՋԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ
ԽՆՈՒՄԱԿԱՅԻՆՈՒՆ ՈՒ ՏՆՕՐԵՆՈՒՅԻՆՈՂ
ԿԸ ԻՐԱԿԻՐԵՆ ԸՆԴ ԻՐԱԿԻՐԵՆ ԿԱՅՈՒՄԱՆ,
ԽՆՈՒՄԱԿԱՅԻՆՈՒՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒՄ ԿԱՅՈՒՄԱՆ,
ԼԵՅՈՒՆ ԵՒ ՀԱՌԻՐՏ ԳԱՐԱԿԵՕՋԵԱՆՆԵՐՈՒ
ԵՐԵՎԱՆԻ ԵՐԿՐԱՆՆԵՐՈՒ:



bezdig\_mezdig@hotmail.com

ՍԱԿԱՐԱՆ

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 'Պէլլոնի սակարանից մէջ օտար դրամացիներու փակման սակագինները'.

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 'ՍՍԿԻ Անգլիական մէկ ոսկի'.

Table with 2 columns: Item description and Price. Includes items like 'ՍՄԵՐԻԿԵԱՆ տոլարի փոխանակման սակերը'.

ՍՄԵՐԻԿԵԱՆ փառայար 565 դրամ

ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ ԳԻՆԻ Ա. ճշդում ԳԻՆԻ Բ. ճշդում

Ա. կարգ - Բ. կարգ

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

ՕՐԱՏԵՏՐ

ՀԱՍՏԱՏՈՒՄ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԵՐԳ

ԵՐԵՅ ՍԵՐՈՒՆԳԻ ԼԻԲԱՆԱՆՑԻ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՍԱՍԻՐ ԹԱՊԵԹԻ ՆՈՐ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ

Պարզ եւ ինքզինք բացատրող խորագիր մը ունի իբրև նանցի գեղանկարունդին առաջ սերունդին պատկանող արուեստագէտ Սամիր Թապէթի «Տը լա փենթիւր... սէմփլը-ման» («Պարզապէս... գեղանկարչութիւն») ցուցահանդէսը, որ ներկայիս կը ցուցադրուի «Ալիս Մոնպարնայ» ցուցարանին մէջ:



Ինչ արուեստագէտին որդեգրած շատ դասական եւ իրապաշտ ոճով, գիծերու եւ գոյներու յստակութեամբ, ինչպէս նաեւ մանրամասնութիւններու ճշգրիտ ներկայացմամբ:

ԱՅՍՕՐ

- Նուագահանդէս՝ դաշնակահար Թաթիանա Փրիմաթ Խուրիկ Ելոյթ, Պալմանտի համալսարան, ժամը 18:30ին:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ լիբանանահայ երիտասարդ արուեստագէտներու գործեր, ԵՌԻՆԵՍՔՕ, մինչեւ 12 Դեկտեմբեր:
- Հայկական ձեռագործներու ցուցահանդէս՝ «Փրոմընտ» պանդոկին մէջ, մինչեւ 19 Դեկտեմբեր:
- Եւրոպական շարժապատկերի փառատոն՝ շարժապատկերի «Սոֆիլ» սրահ, մինչեւ 7 Դեկտեմբեր:
- Տօնավաճառ՝ «Սուր Էլ Պարդուր», «Պիլ», մինչեւ 7 Դեկտեմբեր:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Տը լա փենթիւր Սեմփլըման», Սամիր Թապէթի գործերը, «Ալիս Մոնպարնայ» ցուցարան, մինչեւ 24 Դեկտեմբեր:
- Լուսնակարչական ցուցահանդէս՝ «Հիսթորիա տորմի տեպոլ», Ֆուլվիո Քոստիի գործերը, «Էսփաս Էս. Տէ.» ցուցարան, մինչեւ 13 Դեկտեմբեր:
- Լուսնակարչական ցուցահանդէս՝ «Լա Ռեշերչը տը լ'օմ օ սապլ», Անթելիքա Շրեօտրի գործերը, «Կեօթէ» հիմնարկ, մինչեւ 19 Դեկտեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Կրանտ Է Ժեօն», «ժանիւն Ռուպիլ» ցուցարան, մինչեւ 31 Դեկտեմբեր:
- Նկարչական հաւաքական ցուցահանդէս՝ «Ալբրոք» բանգարանի «Աշնանային սալոն»ը բանգարանին ցուցարանին մէջ, մինչեւ 17 Յունուար:
- Նկարչական ցուցահանդէս՝ «Բիւլպիւր», Քրիս Սերաֆին - Լէյննի գործերը, «Ֆընել» ցուցարան, մինչեւ 7 Յունուար:
- Թատրոն՝ «Քամա ալ արտ, բազալիքա մին... ֆաուր», ժամը 20:30ին, «Քազինո տիւ Լիպան», մինչեւ 29 Փետրուար:

ՕՐԵՆԵՒՈՅԹ



ՇԱԲԱԹ, 6 ԳԵԿՏԵՄԵՐԻ 2003
ՊԵՅՐՈՒԹ
ԱՆՁՐԵՒՈՅ
ՋԵՐՍԱՍՏԻՃԱՆ
ՑԵՐԵԿ՝ 19°C
ԳԻՇԵՐ՝ 14°C
ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 73%

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 5607 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

1 2 3 4 5 6 7 8 9 10

10x10 grid for the crossword puzzle.

ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ ՈՒՂԱՆԱՅԵԱՅ

- 1. Հայոց կաթողիկոս՝ Յակոբ Բ.:
2. Կանոն - Շքեղ, փառաւոր:
3. Ձայնանիւ - Հանդարտ:
4. Անշարժ - Իրաքեան լրատու գործակալութիւն:
5. Արական անուն:
6. Լեռնալիրանանի Պապական գաւառի գիւղերէն:
7. Քահանայի զգեստաւորութեան մաս - Ազդր:
8. Նաեւ - Ժամանակի միաւոր - Շաղկապ (հակ.):
9. Տարուան եղանակներէն - Խոռոչ:
10. Կրկնուած բաղաձայններ - Լիբանանահայ մամուլէն:

ՆՆՆՆՆՆ ՆՆՆՆՆՆ ՆՆՆՆՆՆ ՆՆՆՆՆՆ

ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ)

Օրը պիտի անցնի խաղաղ եւ արդիւնաւետ: Պիտի ունենայ տնտեսական մարզի վերաբերող համաձայնագիր: Ընդունեցէք ձեզի եղած առաջարկները:

ՅՈՒՆ (21 Ապրիլէն 21 Մայիս)

Եթէ ճամբորդելու նպատակ ունիք, պատրաստուեցէք այժմէն իսկ: Տօնական օրերուն առիթը պիտի ունենայ հանդիպելու վաղեմի բարեկամներու, միեւնոյն ժամանակ պիտի ծանօթանաք նոր դեմքերու:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)

Եթէ ունիք արուեստի վերաբերեալ աշխատանքներ, օրը յարմար է ստեղծագործելու: Շաբաթավերջը պիտի անցընէք հանելի մթնոլորտի մէջ: Օրը բարի է:

ԽԵՑԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)

Հեռու մի՛ մնաք ընկերային հանդիպումներէ: Կ'ուզէք տեղափոխուիլ՝ միեւնոյն ժամանակ առաջարկելով ու համոզելով ձեր շուրջիներէն ալ, որպէսզի միասին ըլլաք այս շաբաթավերջին: Հանելի պահեր պիտի ունենաք:

ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Ձեր մոլորակ-աստղը այսօր ձեզ պիտի օժտէ բազալի եւ անհաւատալի կարողութեամբ մը. պիտի կարողաք մարդոց մտածումները: Այսպիսով պիտի փաստուի ձեր ունեցած շնորհքը:

ԿՈՅՍ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Սիրոյ կամ աշխատանքի մարզերը կը հետաքրքրեն ձեզ. եթէ անոնք կապուած են արտասահմանի հետ, պիտի ունենաք արդիւնաւետ գործունեութիւն:

ԿՇԻՌԲ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Եթէ մարզանքի հետեւող էք, շարունակեցէք նոյն բաժնով, որովհետեւ ձեր անողջութեան շատ պիտի նպաստէ: Օրը յարմար է հիւրեր ընդունելու:

ԿՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Եթէ հարց մը ունիք ձեր կողակիցին կամ ձեր ընկերոջ հետ կարողութեամբ, համաձայնաբար ըրէք ձեր աշխատանքը: Տարակարծութիւնը պետք է չբանայ այս պարագային:

ԱՂԵՂՆԱՒՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Այսօր մէկ կողմ դրէք դժուարին եւ ծանրութիւն ստեղծող աշխատանքները՝ անոնց փոխարէն տեղ տալով գուարճալիքներու, ընտանիքին անդամներուն հետ միասնաբար գուարք պահէք ապրելու:

ԱՅՅԵՂԶԻԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Գիշերային զբօսակայքի մը մէջ կամ պարանցիկ երեկոյի մը ընթացքին պիտի հանդիպիք հանելի անձնութիւն: Անոնց հետ պիտի ստեղծուի ջերմ եւ մնայուն բարեկամութիւն:

ԾՈՎԱՆՈՅԸ (21 Յունուարէն 19 Փետրուար)

Կատարեցէք ձեր ընտանեկան եւ ընկերային պարտականութիւնները: Պատասխանեցէք հրաւերի մը, որ պիտի ըլլայ շաբաթավերջը գուարճացնող առիթ:

ՁՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)

Կապ պահեցէք հեռու երկիր բնակող ձեր հարազատներուն կամ բարեկամներուն հետ: Անոնք մտահոգուած են ձեզմով, բանի որ երկար առեւեկ ի վեր ձեր կապը խզած էր իրենց հետ: Շաբաթավերջը պիտի անցնի խաղաղ:

ԹԻԻ 5606

ԽԱՉԲԱՌԻՆ



ԼՈՒԹՈՒՄԸ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11
1 Չ Ա Ր Ե Կ Ս Մ Օ Տ Ի Կ
2 Ի Ր Ա Խ Լ Բ Ա Ս Մ Մ Ի
3 Ն Ա Լ Խ Լ Բ Ա Ր Թ Ս Ա Ս
4 Ա Ս Թ Ի Ր Ա Խ Ի Ե
5 Ս Ե Լ Բ Ե Լ Թ Ա Փ
6 Տ Լ Ո Ւ Ն Ն Կ Ե Ր
7 Ա Ի Կ Ի Կ Ի Ս Ա Ղ Ի Լ
8 Ն Ո Ր Ա Ն Շ Ա Ն Շ Ո
9 Ս Ա Ր Օ Ն Ա Ս Ր
10 Ա Վ Ր Ա Տ Ա Ս Ր Ի
11 Լ Ի Լ Ա Ս Կ Ի Ի Ի

ԱՅՍՕՐ 6 ԳԵԿՏԵՄԵՐԻՆ

- 1949.- Մահ Սորոք Կարոյի:
1956.- Մահ Վիպասան եւ քառերգի Դերմիկ Դեմիրճեանի:
1989.- Պաքոյի մէջ կը կազմուի յատուկ մարմին մը՝ Արցախի ղեկավարութիւնը ստանձնելու: Կազմկազմը անունով ձանցողած այս մարմինը կը գլխավորէ Արապէճեան Ընտանաբար կուսակցութեան Բ. քարտուղար Պոլիանիկո: Ըայեր կը մերժեն մաս կազմել անոր:

Մ Ա Ր Ջ Ա Կ Ա Ն - Ա Շ Խ Ա Բ Ն



ԼԻԲԱՆԱՆԻ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻՆ ԿՈՂՍԷ

ԿԱՐՕ ԹԻԹԻԹԻՆՃԵԱՆ ԵՒ ՊԱՏՐԻԿ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԵՑԱՆ

Վաստակաւոր սկաուտներ պարգեւատրող ձեռնարկի մը ընթացքին, երէկ երեկոյան, Լիբանանի սկաուտական ֆետերասիոնը պաշտօնական հանդիսութեան մը ընթացքին պարգեւատրեց Լիբանանի սկաուտական 18 միութիւններէն 33 ղեկավար, որոնց կարգին Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան անդամներ՝ Կարօ Թիթիթիան եւ Պատրիկ Կիլպէնկեան:

Պարգեւատրման հանդիսութիւնը տեղի ունեցաւ սրահին ներքին «Մար Աքրան» եկեղեցիին սրահը, Էջրեֆիէ: Ներկայ էին Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան, Լիբանանէստրիական գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Նասրի Խուրի, երեսփոխան Ալիստիս Թըրրօ, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան ատենապետ Գառնիկ Մկրտիչեան, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային վարչութեան եւ Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամներ, ինչպէս նաեւ՝ Լիբանանեան սկաուտական կազմակերպութիւններու ծնողներ:

Կարօ Թիթիթիան եւ Պատրիկ Կիլպէնկեան պարգեւատրուեցան Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով իրանեան սկաուտութեան իրենց ունեցած աւելի քան 35 տարիներու ներդրումին եւ վաստակին համար:

Այս առիթով, նախարար Սեպուհ Յովնանեան եւս խորհրդանշական մետալ մը ստացաւ Լիբանանի սկաուտական ֆետերասիոնի նախագահ Ռուբըկ Քասսիսի կողմէ:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԼԻԲԱՆԱՆԻ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՖԵՏԵՐԱՍԻՈՆԻՆ ՀԵՏ



Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային վարչութիւնը երէկ Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնատեղիին մէջ հանդիպում ունեցաւ Լիբանանի սկաուտական ֆետերասիոնի նախագահ Ռուբըկ Քասսիսի եւ ֆետերասիոնի անդամներու հետ: Հանդիպումը առիթ մը եղաւ ծանօթացման: Քանարկուեցան սկաուտական աշխատանքին կապումը հարցեր, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտական աշխատանքին առնչուող խնդիրներ:

Հ.Մ.Ը.Մ. - ԼԵՎԱՍ

ՎԱՂԸ ԿԻՐԱԿԻ ԲՐՈՍ-ՔԱՌԻՆԹՐԻԻ ՄՐՅՈՒՄՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.ի ԼԵՎԱՍԻ 2003-2004 եղանակը կը սկսի վաղը Կիրակի, 7 Գեկտեմբերին, երբ տեղի կ'ունենան քրոս-քաունթրի մրցումները՝ Պիթֆայայի վանքին շուրջը: Բրոս-քաունթրիի այս մրցումները կը սկսին նախագահութեամբ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեանի եւ հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային վարչութեան: Նկատի ունենալով, որ մրցումներուն ազնայնը կը իրենց առաւելու ժամը 8:00էն սկսեալ, իրենց մասնակցութիւնը բերող աշակերտները պարտին ներկայ ըլլալ ժամը 7:30ին, որպէսզի ԼԵՎԱՍԻ յանձնախումբը պէտք եղած կարգադրութիւնները կատարէ: Պաշտօնական բացումը տեղի պիտի ունենայ ժամը 11:00ին: Ինչպէս միշտ, ծնողներուն ներկայութիւնը քաջալերական եղած է իրենց մասնակցութիւնը բերող աշակերտներուն համար, որոնք անոնց ներկայութեան կը փորձեն աւելի լաւ արդիւնք արձանագրել:

Բրոս-քաունթրիի այս մրցումները ուշագրաւ կ'ըլլան նաեւ այն իմաստով, որ անոնք կ'ըլլան եղանակի բացման մրցումները, իսկ անոնց ընթացքին ի յայտ կու գան բացառիկ յատկութիւններով օժտուած մարզիկներ, որոնք պայագային կրնան միանալ Հ.Մ.Ը.Մ.ի աթլետիկ խումբին: Հետեւաբար, ծնողներէն կը սպասուի վաղը Կիրակի իրենց ժամագրավայրը դարձնել Պիթֆայայի վանքը:

Հ.Մ.Ը.Մ. ՊԻՏԻ ԱՐՁԱՆԱԳՐԵ՞ ԵՂԱՆԱԿԻ ԻՐ ԱՌԱՋԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Լիբանանի ֆութպոլի ախոյեանութեան 5րդ հանգրուանի մրցումներուն, այսօր տեղի կ'ունենան երկու ճակատումներ, իսկ վաղը՝ մնացեալ չորս հանդիպումները:

Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի ներկայացուցչական խումբը, որ այսօր երեկոյան ժամը 8:30ին պիտի ճակատի Անսարի դէմ, եղանակի իր առաջին մրցումը պիտի կատարէ Պէյրութի Քաղաքայեւտարանի դաշտին վրայ, փորձելով հոն արձանագրել նաեւ եղանակի իր առաջին յաղթանակը:

Յարդ իր կատարած չորս մրցումներէն միայն մէկ կէտ ապահոված Հ.Մ.Ը.Մ., այժմ կը գրաւէ նախաՎերջին դիրքը, Հ.Մ.Ը.Մ. յաջողեցաւ միայն մէկ կէտ խլել Սաֆայէն (1-1), մինչ մնացեալ մրցումներուն պարտութիւններ կրեց՝ Նըժմէն (3-1), Օլիմփիքին (2-1) եւ Թատանուն Սուրէն (2-1):

Լիբանանի ֆութպոլի ֆետերասիոնը, իր գումարած Հինգշաբթի

օրուան ժողովին, հրապարակեց 6րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը, ինչպէս նաեւ իր կեդրոնատեղիին մէջ կատարեց Լիբանանի ֆութպոլի բաժակի մրցաշարքին վիճակագրութիւնը:

Ֆետերասիոնը յայտնեց, որ քառորդ աւարտականի եւ կիսաաւարտական հանգրուանի մրցումները տեղի պիտի ունենան երթուղարձի դրութեամբ:

Ստորեւ՝ 5րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

● ԱՅՍՕՐ	ժԱՄ	ԳՎՇՏ
Ահտ - Հ.Մ.Մ.	2:15	Սայտա
Անսար - Հ.Մ.Ը.Մ.	8:30	Պէյրութ
● ՎԱՂԸ		
Նըժմէ - Շապապ Սահէլ	2:15	Մ. Աւան
Թատանուն Սուր - Սայամ	2:15	Սուր
Մապարա - Սաֆա	2:15	Ահտ
Օլիմփիք - Սաժէս	4:45	Պէյրութ

ՍՏՈՐԵՒԻ 6րդ հանգրուանի մրցումներուն յայտագիրը.

● ԱՅՍՕՐ	ժԱՄ	ԳՎՇՏ
Սաժէս - Սաֆա	2:15	Պ. Համուտ
Ահտ - Հ.Մ.Ը.Մ.	8:30	Պէյրութ
● ԿԻՐԱԿԻ, 14 ՀՈՎՏԵՐԵՐ		
Շապապ Սահէլ - Օլիմփիք	2:15	Պէյրութ
Սայամ - Անսար	2:15	Թրիփոլի
Թատանուն Սուր - Մապարա	2:15	Սուր
Հ.Մ.Մ. - Նըժմէ	4:45	Սայտա

2006Ի ՄՈՆԻՏԻՆԳԻ ԵՒՐՈՊԱՅԻ ԵՒ ԱՍԻՈՅ ԶՏՈՒՄԻ ՄՐՅԱՇԱՐՔԵՐՈՒ ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՒՆԸ

Երէկ, Յրանքֆորթի մէջ (Գերմանիա) տեղի ունեցաւ 2006ի Մոնիտինգի մրցաշարքին պտումի մրցումներուն վիճակագրութիւնը: Վստահաբար, որ ամէնէն ուշագրաւ վիճակագրութիւնը տեղի կ'ունենար Եւրոպայի մէջ, նկատի ունենալով որ անիկ ունի Կարաիւր երկիրներու ֆութպոլի ազգային խումբերը:

Հայաստանի ֆութպոլի ազգային խումբը, որ ՖԻՖԱ-ի կողմէ 2006ի Մոնիտինգի վիճակագրութեան դասուեցաւ վեցերորդ, մաս կազմեց Ա. խմբակին: Հայաստանի մրցակիցները պիտի ըլլան Չեխիան, Հոլանտան, Ռուսիան, Ֆինլանտան, Մակեդոնիան եւ Անտորան:

Քաղաքային ֆութպոլի տեղի ունեցած այլ մրցաշարքերու վիճակագրութիւններուն, Հայաստան իր դէմ ունեցաւ քիչ մը նուազ Կարաիւր մրցակիցներ, քէնէ Հոլանտան եւ Ռուսիան կը մնան Կարաիւր խումբեր:

Անգլիա, որ մաս կազմեց Գ. խմբակին, իր դէմ պիտի ունենայ իր դրացիները՝ Կալէն եւ Հիւսիսային Իռլանտան: Անոր խմբակին մէջ են նաեւ Լեհաստանը, Աւստրիան եւ Ազրբայճանը:

Յրանս, որ մաս կազմեց Դ. խմբակին, պիտի ունենայ բաւական հանգիստ մրցումներ, երբ ճակատի Ալիւրի, Չուիցերիոյ, Իսրայէլի, Կիպրոսի եւ Յարօ Կոլմիէն:

Ուր խմբակներէն Գերմանիոյ իրենց տոմար պիտի ապահովեն 13 երկիրներու ֆութպոլի ազգային խումբերը: Գերմանիա, որ 2006ի Մոնիտինգի հիւրընկալի երկիրն է, Եւրոպայի ցամաքային մրցումներուն մասնակցելու:

Նշենք, որ ուր խմբակներու պարագրունի դիրքերը գրաւող խումբերը, ինչպէս նաեւ յաազոյն երկու երկրորդները պիտի ապահովեն իրենց տոմարը:



2006ի Մոնիտինգի վիճակագրութեան ցերեպներէն. ձախէն աջ՝ Միքայէլ Շուլմարք, Սեփ Պլեթըր, Փելե եւ Յրանք Պեճըպատը:

հովնէ իրենց տոմարը: Մնացեալ երեք տոմարուն համար, երկրորդ դիրքերը գրաւող վեց խումբերը փէյնօֆի երթուղարձի մրցումներ պիտի կատարեն իրարու դէմ, այսպիսով այդ թիւը ամբողջացնելով 13ի:

Ստորեւ՝ Եւրոպայի վիճակագրութիւնը.

● Ա. ԽՄԲԱԿ.- Չեխիա, Հոլանտան, Ռուսիա, Ֆինլանտան, Մակեդոնիա, ՀԱՅԱՍՏԱՆ եւ Անտորան:

● Բ. ԽՄԲԱԿ.- Թուրքիա, Դանիա, Յունաստան, Ուքրանիա, Վրաստան, Ալպանիա եւ Ղապարտան:

● Գ. ԽՄԲԱԿ.- Փորթուգալ, Ռուսիա, Սլովակիա, Լաթվիա, Եսթոնիա, Լիխթենշտայն եւ Լուքսեմպուրգ:

● Դ. ԽՄԲԱԿ. Յրանս, Ալիւր, Չուիցերիա, Իսրայէլ, Կիպրոս եւ Յարօ Կոլմիէն:

● Ե. ԽՄԲԱԿ.- Իտալիա, Սլովենիա, Սլովակիա, Նորվեգիա, Պիլիպիններ եւ Մոլդաւիա:

● Զ. ԽՄԲԱԿ.- Անգլիա, Լեհաստան, Աւստրիա, Կալէն, Հիւսիսային Իռլանտան եւ Արգենտինա:

● Է. ԽՄԲԱԿ.- Սպանիա, Պելճիքա, Սերպիա, Պոնտիա, Լիբանանի եւ Սան Մարինօ:

● Ը. ԽՄԲԱԿ.- Շուէտ, Իսրայէլ, Պուլկարիա, Իսլանտան, Հունգարիա եւ Մալթա:

ՍՏՈՐԵՒԻ Ասիոյ ցամաքային վիճակագրութիւնը (ուր խմբակի պարագրունի դիրքերը գրաւող խումբերը կ'ապահովեն յաջորդ հանգրուանի իրենց տոմարը, որմէ ետք երկու խմբակներուն պարագրունի դիրքերը գրաւող խումբերը կ'ապահովեն Գերմանիոյ իրենց տոմարը):

● Ա. ԽՄԲԱԿ.- Իրան, Քաթար, Յորդանան եւ Լաոս:

● Բ. ԽՄԲԱԿ.- Ուլպէքիստան, Իրաք, Պաղեստին եւ Թայլանդ:

● Գ. ԽՄԲԱԿ.- Ճափոն, Օման, Հնդկաստան եւ Սինկափոր:

● Դ. ԽՄԲԱԿ.- Չինաստան, Քուեյթ, Մալեպիա եւ Հոնկ Բոնկ:

● Ե. ԽՄԲԱԿ.- Արաբական Միացեալ Էմիրութիւններ, Թայլանդ, Եմէն եւ Հիւսիսային Բորնէա:

● Զ. ԽՄԲԱԿ.- Պահայէն, Սուրիա, Խորհրդային ստան եւ Տաճիկիստան:

● Է. ԽՄԲԱԿ.- Հարաւային Բորնէա, Լիբանան, Վիետնամ եւ Մալդիւ:

● Ը. ԽՄԲԱԿ.- Սեյուական Արաբիա, Ինտոնեզիա, Թուրքմենիստան եւ Սրի Լանքա:

ՊԱՏՔԵԹՊՈՆ

Հ.Մ.Ը.Մ. ԿԸ ՃԱԿԱՏԻ ՂԱԶԻՐԻ ԴԷՄ

Լիբանանի պաքթթպոլի տղոց Բ. դասակարգի ախոյեանութեան 3րդ հանգրուանի մրցումներուն, այսօր Շաբաթ, Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցչական խումբը Ղապիթի դաշտին վրայ կը ճակատի դաշտին տէրերուն դէմ: Մրցումը տեղի կ'ունենայ ժամը 21:30ին:

Միւս կողմէ, աղջկանց Բ. դասակարգի ախոյեանութեան 4րդ հանգրուանի մրցումներուն, վաղը՝ Կիրակի, Հ.Մ.Ը.Մ. Պէյրութ կարեւոր մրցում մը ունի կատարելիք, երբ ճակատի Շանվիլի դէմ: Մրցումը տեղի պիտի ունենայ կէսօրէ առաջ ժամը 11:00ին, Անդրանիկի «Տեմիրճեան» կեդրոնին մէջ (Նաքքաշ):

Մրցումը կարեւոր պիտի ըլլայ այն իմաստով, որ երկու կազմերն ալ արձանագրած են երեքական յաղթանակ, առանց պարտութիւն կրելու: Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներէն կը սպասուի երկու մրցումներուն ալ դաշտ ներկայանալով, քաջալերել Հ.Մ.Ը.Մ.ի տղաքն ու աղջիկները, մանաւանդ որ Բ. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն (երկուքին պարագային ալ) դաշտ մուտքը ձրի է:

ՀՍԿԱՆԵՐՈՒ ՃԱԿԱՏՈՒՄ «ՆՈՒՔԱՄՓԻ» ՄԷՋ՝ ՊԱՐՍԵԼՈՆԱ - ՌԷԱԼ ՄԱՍՐԻՏ

Շաբաթվերջին տեղի ունենալիք Եւրոպայի ֆութպոլի ախոյեանութեան մրցումներուն տեղի պիտի ունենան բաւական հետաքրքրական եւ տաք ճակատումներ, սակայն ամէնէն ուշագրաւ եւ ուժի ցուցադրութեան ճակատամարտը տեղի պիտի ունենայ Սպանիոյ մէջ (15րդ հանգրուան), ուր «Նուքամփի» իր դաշտին մէջ Պարսելոնան պիտի հիւրընկալէ իր ռիբերի մրցակիցը՝ Ռէալ Մատրիտը:

Ստորեւ՝ շաբաթվերջին տեղի ունենալիք մրցումներուն յայտագիրը (նշենք, որ բոլոր մրցումներուն ալ ժամերը պէտք է նկատի ունենալ Պէյրութի ժամով):

● ԱՊԱՆԻԱ (15րդ հանգրուան)	ժԱՄ
ԱՅՍՕՐ	
Տեփոթթիօ Քորուսա - Մալակա	20:30
Օսասունա - Սելթա Վիլո	20:30
Ռէալ Սոսիէտատ - Ռէալ Պելլո	20:30
Պարսելոնա - Ռէալ Մատրիտ	22:30
ՎԱՂԸ	
Ալպասթեթ - Ռասիլ Սանթանտեր	18:00
Մալորքա - Ռէալ Վալադոլիտ	18:00
Մուրսիա - Վիարէալ	18:00
Սելիլլա - Ռէալ Մարալոսա	18:00
Աթլետիքօ Մատրիտ - Էսփանիոլ	20:00
Վալենսիա - Աթլետիքօ Պիլլաօ	22:00

● ԱՆԳԼԻԱ (15րդ հանգրուան)	ժԱՄ
ԱՅՍՕՐ	
Էմփոլի - Ա. Սե. Միլան	19:00
Լազիօ Ռոմա - Եուվենթուս	21:30
ՎԱՂԸ	
Պոլոնիա - Անքոնա	16:00
Ինթեր Միլան - Փերուճիա	16:00
Լեչէ - Փարմա	16:00
Մոտենա - Պելլո	16:00
Սամոտրիա - Սիենա	16:00
Ռուսիլլոն - Ռեճինա	16:00
Քիեւօ - Ա. Էս. Ռոմա	21:30

● ՊՈՒԼՏԱՎԱԿԱ (15րդ հանգրուան)	ժԱՄ
ԱՅՍՕՐ	
Պիլիսիպիէ - Պելլո	17:00
Ֆուլիէ - Պոլոնիա	17:00
Լիթ - Չելսի	17:00
Լալսթրա Սիթի - Արսենալ	17:00
Մանչ. Մունիթթր - Արսենալ Վիլա	17:00
Միտլլաբլոք - Փորթսմութ	17:00
Նիւքեմ - Լիվըրպոլ	17:00
Թորքենհամ - Վուլվը	17:00
ՎԱՂԸ	
Էվըրթոն - Մանչեսթր Սիթի	16:00
Ստուրիէմպօրն - Չարլթոն	18:00

● ՖՐԱՆՍԱ (17րդ հանգրուան)	ժԱՄ
ԱՅՍՕՐ	
Լանս - Սոշօ	
Նանթ - Թուլուզ	
Ամաքսիա - Օքսէր	
Պարիս - Լիլ	
Ռեն - Փարիզ Սէն Ժերմէն	
Ստրասպուրկ - Պարիս	
ՎԱՂԸ	
Նիս - Մոնփելիէ	
Լը Մանս - Կենիլ	
● 17Գ ՀՆԱԳՐՈՒՄՆԻ բացման մրցումներուն, երէկ գիշեր տեղի ունեցան երկու ճակատումներ, որոնք տուին հետեւեալ արդիւնքները:	
Լիոն - Մէս	2-1
Մարսիլ - Մոնպո	1-2

10
ՄԻՆՉ ԳԱՀԻՐԵԻ ԲԱՆԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ԿԸ ՀԱՐՈՒՆԱԿՈՒՆ

ԻՍՐԱՅԷԼ ԱՅՍՐՅՈՐԴԱՆԱԼԵՆ
ԿՎՐՏԱՔՄԷ
12 ՊԱՂԵՍԻՆՑԻՆԵՐ

Մինչ պաղեստինեան արմատական շարժումներ կը շարունակէին Գահիրէի բանակցութիւնները, իսրայէլեան բանակը տասներկու պաղեստինցիներ կ'արտաքսէր Այսրյորդանանէն դէպի Կապա:

Զինուորական բանքեր մը յայտնեց, որ 12 պաղեստինցիները Կապա արտաքսուեցան, երբ իսրայէլի զեռագոյն ատենանը կանաչ լոյսը տուաւ: Պաղեստինեան ապահովութեան աղբիւր մը հաստատեց, որ 12 հոգի Կապա արտաքսուած է: Արտաքսուող պաղեստինցիներուն մասին մանրամասնութիւններ չփոխանցուեցան:

Մինչ այդ, Գահիրէի մէջ շարունակուեցան բանակցութիւնները, որոնք սկսած էին Հինգշաբթի օր եւ որոնց նպատակն է պինդադրել համաձայնութիւն մը ապահովել, դադարեցնելու համար իսրայէլի զէն յարձակումները:

Գահիրէի բանակցութիւններուն պիտի մասնակցի նաեւ վարչապետ Սիմօն Բորէյ, որ հասանաբար այսօր տնտու հասնի: Բորէյ աշխատանք կը տանի, որ արմատական խմբակները ընդունին պինդադրու մը հաստատել: առիթ տալու իր կառավարութեան, որ իսրայէլի զեռագոյն բանակցութիւններու ձեռնարկէ իսրայէլի հետ: Բորէյ կ'ուզէ համոզել յատկապէս Համասն ու Իսլամական ժիհադը, որոնք արմատական գլխաւոր կազմակերպութիւններն են եւ որոնք ընդհանրապէս պատասխանատուներն են իսրայէլի զէն գործող յարձակումներուն:

Համասի պատուիրակներէն մէկը յայտնեց, որ բանակցութիւնները կ'ընթանան դրական մթնոլորտի մէջ եւ թէ իսլամական շարժումը յայնամտութեամբ կը մտնէ այլ հարցերուն եւ առաջարկուած ծրագիրներուն: Պատուիրակը աւելցուց, որ օրակարգի վրայ դրուած հարցերուն գծով առարկութիւն չարձանագրուեցաւ: Ան ըսաւ նաեւ, որ Համաս որդեգրած է հարցերը վերջի չենթարկելու եւ յայնամտութեամբ քննարկելու քաղաքականութիւն մը:

Համասի եւ Իսլամական ժիհադի պաշտօնատարներ նախապէս յայտնած էին, որ նկատու պիտի ունենան իսրայէլացի քաղաքայիններու զէն յարձակումները իսրայէլի մէջ դադարեցնելու ծրագիրը, որմէ սակայն դուրս կը մնան իսրայէլացի պինուորներն ու բնակեցման վայրերու հրէաները:

Միւս կողմէ, իսրայէլեան կառավարութեան անդամ Էհուտ Օյմէրք Կորակցութիւն յայտնեց պաղեստինեան կարգ մը շրջաններէն հեռանալու ծրագիրին: Օյմէրք, որ առեւտրային նախարար է եւ կը նկատուի պաշտօնապէս թիւ երկուրը Արիէլ Շարոնի կառավարութեան, դիտել տուաւ, որ իսրայէլ այլընտրանք չունի եւ թէ անհրկա պէտք է ընդունի պաղեստինեան պետութեան մը հաստատումը: Եթէ կ'ուզէ պահպանել հրէական պետութեան ժողովրդավար դիմագիծը:

Պաղեստինեան շրջաններուն դէմ հաստատուած միջոցառումը մեղմացնելու կոչեր եղաւ նաեւ այլ պաշտօնատարներէն: Անոնք կ'ըսեն, որ շրջափակումը պէտք է վերցուի, որովհետեւ եթէ Արաֆատ մահանայ Ռամալլայի կենդանատեղիին մէջ, իսրայէլ պիտի մեղադրուի բոլոր պաղեստինցիներուն կողմէ: Հետեւաբար նախընտրելի է, որ Արաֆատ պատուօրէն պատի կապալի եւ Այսրյորդանանի մէջ:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒԹԵՐՈՒՆ ԴԵՄ
ՅԱՐՉԱԿՈՒՄ ՄԸ ԽԼԵՑ ՄԷԿ ԶԻՆՈՒՈՐԻ
ԵՒ ՉՈՐՄ ԻՐԱՔՅԻՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԸ

Չորս իրաքցիներ եւ ամերիկացի պինուոր մը սպանուեցան երէկ Պաղեստինի խճողուած մէկ շուկային մէջ, ուր ռումբ մը թիրախ դարձուց ամերիկացի պինուորներու խումբ մը, հաղորդեցին պինուորական ու հիւանդանոցային աղբիւրներ: Պայթումը խլեց նաեւ 15 վիրատուներ, որոնք բոլորն ալ իրաքցիներն են:

Ականատեսներ յայտնեցին, որ մինչպէս մը իջնող յաճախորդները գլխաւոր վիրատուներն են, որովհետեւ ճիշդ անոնց մօտ պայթած է ռումբը: Ամերիկեան ուժերու բանքեր մը հաստատեց, որ պինուոր մը սպանուած է: Բանքերը չըսաւ, թէ պինուորներ ալ վիրատուած են պայթումին, թէեւ ականատեսներ խօսած էին վիրատու պինուորներու մասին:

Պայթումին վայրը գտնուող իրաքցիները դատապարտեցին արարքը, դիտել տալով, որ անհրկա ոճիր է: Անոնք ըսին նաեւ, որ պայթումը թիրախ դարձուցած էր անմեղ անցորդներ, որոնք շուկան կը գտնուէին:

Մինչ այդ, Պաղեստինի կեդրոնական մէկ այլ թաղամասին մէջ աւելի քան հազար իրաքցիներ մեծ մասամբ շիի, բողոքի հաւաք մը կազմակերպեցին՝ դատապարտելու համար ահաբեկչութիւնը, որ կը հարուածէ իրաքցիներն ու ամերիկեան «պապագրող» ուժերը: Յոյգին առաջին կարգին վրայ կը գտնուէին տասներեակներով մանուկներ, որոնք ծաղիկներ ու պատուներ բռնած կը յառաջանային: Յոյրը կազմակերպող պատասխանատուներէն մէկը ըսաւ, որ դաշնակից ուժերու ներխուժումէն ի վեր տեղի ունեցած ահաբեկչական գործողութիւնները մեծ թիւով մանուկներ որբ դարձուցած են: Ան ըսաւ նաեւ, որ ցոյցին մասնակցած բոլոր մանուկները որբեր են:

Յոյգին մասնակցող իրաքցիները յայտնեցին, թէ կարելի չէ, թէ յարձակումները որո՞ւ դէմ են, որովհետեւ անոնք պատճառ կը դառնան իրաքի վերակառուցման ու յառաջիակացքին արգելակման:

Միւս կողմէ, շիի արմատական կրօնապետ Մոքթատա Սատր սպառնաց ընդհանուր գործադուլի մը դիմել յառաջիկայ ամիս, եթէ ամերիկեան ուժերը պատ չարձակեն իր ղեկավարած շարժումին բանտարկուած անդամները: Բուֆայի գլխաւոր մկկիթին մէջ արտասանած իր քարոզին մէջ, Սատր ըսաւ, որ գործադուլը պիտի սկսի Մոհամէտ Սատէք Սատրի մահուան տարեդարձին օրը, որ Յունուարին է: Ան չըսաւ սակայն, թէ որո՞ւ նք կամ քանի՞ հոգի ձերբակալուած է ամերիկեան իշխանութիւններուն կողմէ: Սատր կ'առաջնորդէ «Մեհտիին բանակ»ը, որ ծայրայեղականներու շարժում մըն է եւ որ դէմ է ամերիկացիներուն ներկայութեան Իրաքի մէջ:

ԹՈՒՐԻՔԻԱ ԵՐԷԿ
քանի մը թո՞ւ մարդաւիրական օժանդակութիւններ ուղարկեց սահմանակից Իրաք: Ծածկոցներ, ներքնակներ, դեղ եւ սննդամիջոց փոխադրող չորս բեռնակառքեր Անգարայէն Արիլի եւ Սալահուտին ուղղուեցան: Օժանդակութիւնները պիտի բաժնուին 2500 ընտանիքներու:

ՇՈԳԵԿԱՌՔԻ ՄԸ ԴԷՄ ԱՆՁՆԱՍՊԱՆԱԿԱՆ ...
Շարունակուած Ա. ԷջԵԸ



Նախագահ վրատիմիր Փուրին դատապարտած է պայթումը, ըսելով, թէ անհրկա «անկասկած երկրին մէջ կացութիւնը ապակայունացնելու փորձ մըն է՝ խորհրդարանական ընտրութեանց նախօրեակին»:

Ան ըսած է, թէ միջազգային ահաբեկչութիւնը, որ աշխարհի տարածքին բազմաթիւ երկիրներու մարտահրաւիր կ'ուղղէ, «կը շարունակէ մեր երկրին լուրջ սպառնալիք դառնալ»: Արդարութեան նախարար Եուրի Չայքա յայտնած է, թէ յարձակումը չէ-չէն անջատողականներու կնիքը կը կրէ: Պետական Տումայի պաշտպանութեան յանձնախումբին ատենապետը՝ Ալեքսանտր Կուրուլ, ըսած է, թէ նկատու ունենալով, որ բոլոր յարձակումները Չէչենիոյ կապուած են, յստակ է, թէ չէչէն ըմբոստները պատասխանատու են պայթումին»: Քննիչներ տղամարդուն դիակին մօտ գտած են պայտուակ մը, ուր 10 քվ. Թի. Էն. Թի.ի համապատասխանող պայթուցիկ նիւթեր կային:

ԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԽԻՍՏ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ռուսիա Չէչենիոյ տարածքին ապահովութեան միջոցառումներուն թափ տուած է՝ առ ի պատրաստութիւն վաղուան ընտրութիւններուն, որոնք պիտի կայացուին նաեւ Չէչենիոյ մէջ: Ըմբոստ հանրապետութիւնը միակ ներկայացուցիչ մը պիտի ընտրէ Տումային համար, թէեւ մարդկային իրաւանց խմբակներ կը պնդեն, որ հոն կացութիւնը չափազանց անկայուն է իսկական ընտրութիւններու կայացման համար: Ռուսիոյ ներքին գործոց նախարարութեան մէկ պաշտօնատարը, ըսած է, թէ իշխանութիւնները ստացած են տեղեկութիւններ, ըստ որոնց ահաբեկչական շարք մը արարքներ կը պատրաստուին խմբակի մը կողմէ՝ ըմբոստ ղեկավար Շամիլ Պասաեւի գլխաւորութեամբ:

ՂԱՏԱՊԱՐՏՈՒՄ

Արեւմտեան եւրոպացի ղեկավարները երէկ դատապարտած են անձնասպանական գործողութիւնը: Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութիւնը ըսած է, թէ որեւէ դատ չ'արդարացներ անմասն արարքներ: Գերմանիոյ եւ Պելճիքի արտաքին գործոց նախարարութիւնները նոյնպէս դատապարտած են արարքը:

ՄՈՍԿՈՒԱ ԻՐ ՈՒԹԵՐԸ...
Շարունակուած Ա. ԷջԵԸ

ՓՈՒՐԸԼԻ ԶՈՒԹԱՑՈՒՄԸ

Արտաքին գործոց նախարար Քոլին Փաուըլ Երեքշաբթի օր ԵԱՀԿի մէկ ժողովին կ'ընդհանրուէր Բուսիան ըսելով, թէ անհրկա պէտք չէ Կորակի կանգնի «Վրաստանի հողային անբողջականութիւնը տկարացնել ուղղանջատողական տարրերու»:

Պուրճանած է երէկ Ռամսֆելտի կողքին կանգնած, նոյնպէս այլ մտահոգութիւնը արժարժած է:

Ան ըսած է, որ թէեւ նախագահ վրատիմիր Փուրին բազմիցս յայտնած է, թէ Ռուսիա Կորակի կը կանգնի Վրաստանի հողային անբողջականութեան, «Ռուսիոյ մէջ կան շատ Կորակ ուժեր, որոնք Կորակի կը կանգնին անջատողական շրջաններուն եւ սակայն Վրաստանի մէջ կացութիւնը կը բարդացնէ»:

Ան նաեւ յստակ դարձուցած է, որ Վրաստան պիտի շարունակէ դէպի Արեւմուտք նայիլ:

«Մ. Նահանգներ մեզի համար ռազմավարական գործակից մը կը մնան եւ ՕԹԱՆԻ անդամակցելու մեր փափաքը կենսական կարեւորութիւն ունի», շեշտած է ան:

Առ ի պատասխան Ռամսֆելտ ըսած է. «Եւ մենք վստահաբար պատրաստ ենք օժանդակելու Վրաստանի յառաջիկայ ժամանակամիջոցին»:

Վրաստանի մարտաքաղաքին մէջ ապահովութեան շատ խիտ միջոցառումներ առնուած են Ռամսֆելտի այցելութեան առիթով՝ անցնող 10 օրերուն Թիֆլիսի մէջ արձանագրուած շարք մը պայթումներէն ետք:

ԵՐԷԿ առատուուն, Թիֆլիսի մէջ ռուսական դեսպանատան խորհրդական Վիքթոր Ռենպի յարձակման ենթարկուեցաւ անձանօթներու կողմէ: Յանցագործներու բացայայտման ուղղութեամբ իրաւապահ մարմինները տակաւին գործնական քայլերու չեն դիմած, ինչ որ արժանացաւ ռուսական կողմի քննադատութեան:

ԻԼՀԱՍ ԱԼԻԵԻ ԱՆՅԱԶՈՂ ԿԸ ՆԿԱՏԷ...
Շարունակուած Ա. ԷջԵԸ

ճանաբար կը նուազի Միւսքի խմբակին հանդէպ վստահութիւնը: Լեռնային Վարաբաղի տագնապի բանակցութիւններուն ռուսական պատուիրակութեան ղեկավար, Ռուսիոյ արտաքին գործոց նախարարի առաջին տեղակալ Վիաչեսլաւ Տրուսիլիքով Ալիեի հետ հանդիպումին ընթացքին շեշտեց, որ ԵԱՀԿի Միւսքի խմբակին նախագահները տագնապի միակ, արդար եւ մնայուն լուծումին ճանապարհը կը նետեն խաղաղ բանակցութիւնները: Ռուս դիւանագետին համաձայն, Միւսքի խմբակին նախագահներէն պէտք չէ նոր եւ պատրաստ լուծումներ ակնկալել: «Մենք կրնանք միայն օգնել կողմերուն՝ հասնելու փոխ վիճման, բայց լուծումը իրենք պէտք է գտնեն», ընդգծեց Տրուսիլիքով:

Իր կարգին, Միւսքի խմբակին ամերիկացի նախագահ Ռոնալդ Փրիքենս կարծիք յայտնեց, թէ Արաբիան եւ Հայաստանի մէջ կայացած նախագահական ընտրութիւններէն ետք «տագնապի լուծման նոր հեռանակարներ կը նշմարուին»:

Միւսքի խմբակին նախագահներ Եուրի Մերկուլիակով (Ռուսիա), Հարի ժաբոլէն (Ֆրանսա), Ռուսոլֆ Փրիքենս (Միացեալ Նահանգներ), եւ անոնց ընկերակցող Վիաչեսլաւ Տրուսիլիքով այսօր կը հասնին Հայաստան, ուր հանդիպումներ պիտի ունենան Հայաստանի ղեկավարութեան հետ: Անոնք վաղը պիտի մեկնին Ստեփանակերտ:

Advertisement for Obelix hair care products. Features a man in a cap and text in Armenian: 'ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ', 'ԶԱՇԿԵՐՈՅԹ ՊԱՐԱՀԱՆԴԵՄ', 'ԵՐԳԱՀԱՆԴԵՄ', 'Երեքշաբթի, 5 Յունուար 2004, Երեկոյեան ժամը 9:30ին, BIEL PAVILLON R, ՍՐԱՀԻՆ ՄԷՉ:', 'Երկուշաբթի, 6 Յունուար 2004, Երեկոյեան ժամը 7:30ին, UNESCO սրահին մէջ', 'Schwarzkopf PROFESSIONAL', 'SOSUTԵՐԸ ԿԸ ՎԱՃՄԱՆ', 'Obelix գրալամբոյն - Շոքիլաւ - Համագրայիճի «Առոն Շառլոտտե» - Համագրայիճի գրալամբոյն - Տիպոպէք Geka, Պուրճ Համաս - Սիլիոփո Վալի, Համրն: